

1086/409

Վ. ԳԱՐՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳԵՎԱՌԵԳԻՏԵԿԱՆ

ԵՐԾԵՎՆԵՐԻ

91
7-27

ԼՈՒՍԶՐԱՏ

5 OCT 2011 09/10/11

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԼՈՒՍԺՈՂՎՈՄԱՏ

91
7-27

Վ. ԴԱՐՅԱՆ

ՀԱՆԱԶԵՆԻՔ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԳՆՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՎՆԵՐԻ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԶՈՎԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ


ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР



ԼՈՒՍԺՐԱՏ

6 ր 6 4 2 7 8801

1940



29 MAR 2013

20192

Госуд. дет. б-ва
ордена Ленина
Библиотека СССР
им. В. И. Ленина

21305
48
3292

ՀԱՅ. ԿԱԼ ՎՐԱՄԱՐՈՒ
ԳՕՏ. ԵՊԻՏՈՒԹՅԱՆ
ՀՄՍՍՈՒ-ԱՍՄ ԵՍՄ
ԿՄ. Ա. ՄԱՅԻՍԻԱՆԻ
Ս. ՄՈՍԿՎԱՅԻՆԻ ԱՆՎԱՆ

20833-59

«Ամեն ինչ իմացվում է համեմատությամբ,
և որպեսզի հեզդիս գնահատել Թեոկան, ան-
հրաժեշտ է գիտնալ անցյալը...»

Մ. ԳՈՐԿԻ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հանգստանալ բնության ծոցում, քայլել գույնզգույն ծա-
ղիկների միջով ու անուշահոտ բուրմունքով լի շրջապատում,
ծանոթանալ վայրին, դիտել նրա երկրաբանական կառուցված-
քը, պատմական վայրերը, ծանոթանալ կոլտնտեսության կյան-
քին ու կենցաղին, օղավել բնության վայելքներից և ապա ֆի-
զիկապես հանգստացած ու հարուստ տպավորություններով վի-
րադառնալ տուն:

Այս նպատակադրումով պետք է կառուցված լինի դավա-
ռագիտական աշխատանքը պիոներական ջոկատներում:

Միթե ավելի հետաքրքրական, ավելի հմայելի բան կարելի
է պատկերացնել պիոներական ջոկատներում և ամառային ճամ-
բարներում, քան գաժառաղիտական արշավները: Երեխաները շատ
են սիրում և հետաքրքրվում այդպիսի ճամբորդություններով:

Բայց ինչպես կազմակերպել այդ արշավները, ինչպես նա-
խապատրաստել: Ո՞ւմից ստանալ մարշրուտը: Ո՞ւր գնալ, ո՞ւմ
հետ գնալ և ի՞նչ միջոցներով:

Ահա հարցեր, որոնք ամեն անգամ ծառանում են երեխա-
ների առջ, երբ նրանք նախապատրաստվում են գավառագի-
տական ճամբորդությունների:

Նման ճամբորդություններ կարելի է կատարել թե դեպի
հեռավոր և թե դեպի մոտակա վայրերը:

Մեր շատ հայրենասեր պատանիներ ցանկություն են հայտ-
նում գնալ Արկարիկա, կամ օրերով ու ամիսներով ճամբորդու-
թյուններ կատարել մեր երկրի զանազան վայրերում: Պատանի
ընկերներ, դուք պետք է գիտենաք, որ դա որքան հրապուրիչ
արշավ է, նույնքան էլ ձեր տարիքի համար դեռևս վաղ է և

կապված է մի շարք շարժումների ու լուրջ դժվարությունների հետ:

Պիոնների կողմից համար ճանաչողության հետաքրքրական ձևը միօրյա կամ երկօրյա գավառագիտական արշավն է՝ դեպի մոտակա հետաքրքրական վայրերը: Տեղական այսպիսի արշավներ կազմակերպելը հեշտ է ու մատչելի, իսկ արդյունքը լավ կազմակերպելու դեպքում միշտ գոհացուցիչ է լինում:

Այս ուղեցույցում մենք համարոտակի կնշնք, թե ինչ է գավառագիտությունը և ցույց կտանք, թե դպրոցները, պիոնների ամառային ճամբարները, կողմիցներն ու առանձին ջոկատները ինչպես պետք է կազմակերպեն գավառագիտական արշավները և կազմեն այդ արշավների մարշրուտները:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԸ

Մեր հզոր, օր-ալուր ծաղկող սոցիալիստական հայրենիքի բազմամիլիոն ժողովուրդների կուլտուրան, որը զարգացման նոր թափ ստացավ Ստալինյան կոնստիտուցիայի վառ արևի տակ, որին «Ժանոթ չեն անցյալի ազգային անհավասարու-թյունն ու ճնշումը, վայլում է ամբողջ աշխարհով, որպես բանականություն, մարդկային ության և ժողովուրդների բարեկամություն փարոս» («Պրավդա»):

Ստալինյան Մեծ կոնստիտուցիան խանդավառությամբ հսկայական ալիք բարձրացրեց մեր ժողովրդի մեջ, ստեղծագործ աշխատանքի նոր թափ հազարեց ամենալայն աշխատավորական մասսաներին: Ժողովրդի ակտիվությունը անսպառ ազդեցություն ման է՛լ ավելի վարար հորդեց սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում, մի քանի դլլոսով բարձրացավ լայն մասսաների քաղաքական գիտակցության աստիճանը:

Մեր երկրի բանվորների, կուլտուրականների, ծառայողների ու ինտելիգենցիայի, դպրոցականների և երիտասարդության լայն խավերի մեջ խոր ձգտում առաջացավ ավելի մոտիկից ու բազմակողմանիորեն ծանոթանալ մեր ծաղկող հայրենիքի հետ, անցյալից ստացած ժառանգությունների և սովետական բազմազգ ժողովուրդների նստեղծած անսպառ հարստությունների հետ:

Այժմ՝ նրանց հետաքրքրում, հրապուրում է այն ամենը, ինչ կարող է օգտակար լինել սոցիալիստական հայրենիքի տնտեսության ու կուլտուրայի ծաղկման գործին, ժողովրդի բարօրության գործին:

Շատ լայն են ու խորը մեր հայրենիքի ուսումնասիրության հետ կապված խնդիրները ու աշխատանքների ծավալը: Միմիայն մասնագետների ու ժերով հնարավոր չէ այդ գործն ընդգրկել: Այստեղ պետք է օգնություն գան աշխատավորական լայն մասսաները, մեր բոցավառ հայրենասիրները, հուզարավոր ակտիվիստ-ղավառագետները:

Մեր երկիրն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է կազմակերպել հարյուրավոր խմբակներ դպրոցներում, ԲՈՒՀ-երում, գործարաններում, կոլտնտեսություններում, որոնք բազմակողմանիորեն կուսումնասիրեն իրենց բնակավայրը, շրջանը, ռեսպուբլիկան:

Ցանկալի արդյունքների հասնելու տեսակետից կարևոր է, որ այդ խմբակներն ընդգրկեն ուսումնասիրություն հենթակա առանձին բնագավառներ, օրինակ՝ բանվորա-դյուրացիական իշխանություն համար մղված պայքարի պատմությունը, սոցիալիստական շինարարության տարբեր բնագավառներ, աշխարհագրություն, պատմություն, հնագիտություն, երկրաբանություն և այլն, դրանց ուսումնասիրություն համար կազմակերպելով պատանի բնասերներ, երիտասարդ դավառագետներ և այլ խրմբակներ:

Բացի խմբակներից, բոլոր տիպի դպրոցներում, ակումբներում, հիմնարկ-ձեռնարկություններում, ինչպես նաև թանգարաններում անհրաժեշտ է կազմակերպել դասախոսություններ ու զրույցներ բնագիտական հարցերի, բնական հարստությունների, և բնական գիտությունների ուսումնասիրությունների, տվյալ բնակավայրի պատմության, աղագրություն, ֆոլկլորի մասին և այլն:

Անհրաժեշտ է կազմակերպել աշխարհագրական, բնագիտական, կուլտուր-պատմական էքսկուրսիաներ և տուրիստական արշավներ առանձնապես դեպի քաղաքացիական կռիվների վայրերը, էքսպեդիցիաներ՝ օգտակար հանածոներ հայտարարելու նպատակով և բազմաթիվ այլ էքսկուրսիաներ ու տուրիստական արտելներ:

Գավառագիտական այս աշխատանքներում պետք է ներգրավել ուսանողական, աշակերտական և ուսուցչական ողջ ակտիվը, նախաձեռնող և խանդավառություն գործի կպչող մարդկանց, լավագույն կազմակերպիչներին:

Գավառագիտական գործի հաջողությունը մեզ մոտ ապահովված չի լինի, եթե մենք այն սերտորեն չկապակցենք շրջանի ու ռեսպուբլիկայի տնտեսական և կուլտուրական պլանային շինարարություն հետ:

Պլանային տնտեսություն, ինչպես նաև կուլտուրական շինարարություն համար հսկայական նշանակություն ունի պլանների կոնկրետացումը ըստ շրջանների, հաշվի առնելով նրանց բոլորի առանձնահատկությունները (շրջան, մարդ, ռեսպուբլիկա):

Այս տեսակետից հսկայական նշանակություն է ստանում գավառագիտությունը, որն օգնում է ներգրավելու մասսաներին սոցիալիստական շինարարության կոնկրետ խնդիրների կիրառման գործում, օգնում է նրանց ուշագրությունը կենտրոնացնելու տնտեսական, կուլտուրական և կենցաղային շինարարություն հրատապ խնդիրների վրա:

Տեղին է հիշել, թե ընկեր Լենինն ինչպես էր դնում պլանային տնտեսության և այդ պլանների իրականացման գործում մասսաներին ամենամոտ և անմիջական մասնակցություն մեջ ներգրավելու հարցերը:

1920 թվին, փետրվարի 2-3-ին, երբ Համառուսական ԿԳԿ նստաշրջանը բանաձև պետք է ընդուներ էլեկտրիֆիկացիայի վերաբերյալ, ընկ. Լենինը նշեց՝

«...Սովետական Ռուսաստանի համար առաջին անգամ է հնարավորություն ստեղծվել զբաղվելու ավելի պլանաչափ տնտեսական շինարարությամբ, գիտական վերամշակմամբ և հետևողականորեն կյանքում կիրառելու ամբողջ ժողովրդական տնտեսության պետական պլանը...»*):

Վերադառնալով Իլյիչ Լենինը շտապեցնում էր ավարտել այդ պլանի մշակումը և հաստատել այն: Նա հանձարարում էր ձեռք առնել բոլոր միջոցները՝ ամենալայն կերպով կազմակերպելու այդ պլանի պրոպագանդայի գործը:

«...Այդ պլանի ուսումնասիրությունը պետք է մտցնել առանց որևէ բացառության ռեսպուբլիկայի բոլոր ուսումնական հաստատություններում...»**):

1920 թվի հունվարի 1-ին, ընկ. Կրժիժանովսկուն ուղղված նամակում ընկ. Լենինը մտահոգություն է արտահայտում այն բանի առթիվ, թե անհրաժեշտ է բանվորների և գյուղացիների լայն մասսաներին ներգրավել էլեկտրիֆիկացիայի պլանի աշատանքների մեջ, սոցիալիստական շինարարության և սոցիալիստական տնտեսության առաջին գլխավոր պլանի իրագործման մեջ:

«Զի՛ կարելի արդյոք, — գրում էր Լենինը, — ավելացնել ոչ թե Տեխնիկական պլան (այդ, իհարկե, շատերի գործն է և ոչ շտապողական), այլ քաղաքական և պետական, այսինքն պրոլետարիատին հանձնարարված գործ... Այն պետք է տալ այժմ, որպեսզի հասկանալի

*) Լենին. Երկեր հատ. XXVI, էջ 169:
**) Լենին. Երկեր հատ. XXVI, էջ 171:

հանրամատչելի, մասսաների համար պարզ ու պայ-
ծառ (միանգամայն գիտական հիմքով) հեռանկար-
ներով զրավել, իհարկե, պարզ է, որ 10—20 տարվա
աշխատանքով մենք ամբողջ արդյունաբերական և
գյուղատնտեսական Ռուսաստանը կզարձենք էլեկ-
տրական... Կրկնում եմ պետք է բանվորների և
գիտակից գյուղացիների մասսաները 10—20 տարվա
մեծ ծրագրի գործի մեջ քաշել*):

Պլանային տնտեսութան մեծագույն նշանակութունը, որը
բնորոշ է միայն Սովետական երկրի համար, պետք է առաջին
հերթին հիշի յուրաքանչյուր զավառագետ և սոցիալիստական հայ-
րենիքի այդ պլանի սահմաններում փնտրել ու գտնել իր անմիջա-
կան ուսումնասիրութան բնագավառը և սոցիալիստական շինա-
բարութան մեջ իր կոնկրետ մասնակցութան ձևերը:

«Ավելի շատ փաստերի ճանաչողութուն,—անընդհատ
կրկնում էր ընկեր ԼԵՆԻՆԸ,—ավելի շատ ուսումնա-
սիրել այն ամենը, ինչ տալիս է մեր գործնական
փորձը, կենտրոնում և տեղերում, և այն, ինչ գիտու-
թյունն արդեն մեզ տվել է...»**):

Այսպիսով միանգամայն պարզ է, թե ինչպիսի խոշոր խըն-
դիրներ են զրված սովետական զավառագիտութան առաջ:

Սովետական զավառագիտութունը պետք է աշխատի սո-
ցիալիստական արդյունաբերութան ու գյուղատնտեսութան,
ՄՍՌՄ աշխատավորների ծաղկող կուլտուրայի էլ ավելի բար-
գավաճման համար:

Սովետական զավառագիտութունը միաժամանակ հանդի-
սանում է բանվորական և գյուղացիական մասսաների մեջ
գիտութան կիրառման ուսուցիչից մեկը, առանձ-
նապես երիտասարդութան մեջ. դրա մասին էր ասում ընկեր
ԼԵՆԻՆԸ, երբ նա պահանջում էր, որ գիտութունը իրականում
պետք է միս ու արյուն դառնա, կազմելով ամբողջապես կեն-
ցաղի անմիջական և իրական մասնիկը:

Այսպիսով՝ սովետական զավառագիտութունը հանդիսանում
է այն հզոր և դաստիարակչական մեծ նշանակութուն ունեցող
լծակներից մեկը, որը մեր ամենալայն մասսաների մեջ պատվաս-
տում, աճեցնում ու զարգացնում է սովետական հայրենասիրու-
թյան վեհ ու սրբազան ձգտումներն ու զգացումները:

*) Լենին. Նոկեր հատ. XXI, էջ 432:

***) Լենին. Նոկեր հատ. XXVI, էջ 174:



Գիտություն.—Մրանցի կամուրջը

* * *

Տարեց-տարի ավելի ու ավելի հզորանում է սովետական ժողովրդի սերն ու նվիրվածութունը դեպի մեր մեծ ու հզոր հայրենիքը:

Հազարավոր աշխատավորներ ճանապարհորդութուններ են կատարում, էքսկուրսիաներ ու էքսպեդիցիաներ են կազմակերպում դեպի մեր լայնածավալ երկրի հեռավոր անկյունները, դեպի երկնամբարձ լեռներն ու կապուտակ ջրերը՝ ուսումնասիրելու և ճանաչելու մեր սքանչելի հայրենիքը:

Բազմաթիվ աշխատավորներ ու դպրոցականներ այցելում են իրենց գյուղում, շրջանում, քաղաքում գտնվող գործարանները, ֆաբրիկաները, հանքերը, կոլտնտեսութունները, հետիոտն արշավներ են կազմակերպում դեպի քաղաքացիական կռիվների վայրերը, ծոնոթանում են Մեծ Հոկտեմբերի համար մղած պայքարի պատմությանը, ուսումնասիրում են մեր երկրի ընդերքը:

Մեր երկիրը ճանաչելու ձգտումը քանի գնում ավելի ու ավելի մեծանում է աշխատավոր լայն խավերում: Սակայն այդ խնդրում բացակայում է մեր համապատասխան կազմակերպութունների (ժողովրդափնիսներ, ակումբներ, պրոֆմիություն և այլն) անհրաժեշտ դեկավարությունը և կազմակերպված օգնութունն ու օժանդակութունը:


Անցյալում (մինչև 1937 թ.) գոյություն ունեցող գավառագիտական ընկերությունները և գավառագիտական բյուրոները ի վիճակի չէին և չէին էլ կարող ինչպես հարկն է այն կազմակերպել և դեկավարել:

Գավառագիտական աշխատանքների դեկավարությունը լուսավորության օրգաններին հանձնելուց հետո, դրությունը հիմնովին փոխվեց:

Այժմ սովետական գավառագիտության խնդիրները չեն սահմանափակվում միմիայն բնական հարստություններ ուսումնասիրելով, այդ խնդիրներն ընդգրկում են շատ ավելի լայն ու կարևոր բնագավառներ:

Սովետական գավառագիտությունը մեծ անելիքներ ունի մեր երիտասարդությանը սովետական հայրենասիրության ջերմ ոգով դաստիարակելու ուղղությամբ:

Ահա թե ինչու գավառագիտական աշխատանքների կազմակերպիչներն ու էնտուզիաստները շրջաններում, դպրոցներում, գործարաններում, և այլն ձեռնարկություններում ու հիմնարկություններում հանդիսանալու են գերազանցապես երիտասարդները, կոմերիտականներն ու կոմերիտական կազմակերպությունները:



Արագածի Գեղհովիտի ընդհանուր տեսարանը

Կոմերիտմիության դերն այս խնդրում հսկայական է: Ուրեմն՝ ներկայումս ինչպիսի խնդիրն էր է դրնում իր առաջ սովետական գավառագիտությունը:

1. Ժողովրդական լայն մասսաների մեջ զարգացնել ինքնագործունեություն և նրանցից պատրաստել սոցիալիստական շինարարության ակտիվ կառուցողներ:

2. Մեր հայրենիքի հետախուզական ուսումնասիրությունների գործում (տնտեսություն, պատմություն, կուլտուրա, կենսադ, օգտակար հանածոներ և այլն) ներգրավել ժողովրդական ամենալայն մասսաներին:

3. Ծանոթացնել լայն մասսաներին. մեր երկրի, ռայոնի, բնակավայրի հետ:

Այդ նպատակով անհրաժեշտ է բազմաթիվ խմբակներ կազմակերպել հազարավոր պատանի բնագետներից, կերտասարդ գա-

վառագետները, աշխարհագրության հարցերով հետաքրքրվողները, պատմության, հնագիտության, երկրաբանության, Մեծ Հոկտեմբերի համար մղված պայքարի պատմությամբ, սոցիալիստական շինարարության հարցերով զբաղվողները: Այդ խմբակները կազմակերպել զպրոցներում, ահուժբնորում, կոլտնտեսություններում, գործարաններում և այլն: Միաժամանակ հարկավոր է այդ բոլոր հարցերի շուրջը կազմակերպել նաև զբույսները: Անհրաժեշտ են դասախոսություններ՝ առանձին շրջանների ազգագրության, ֆոլկլորի մասին, էքսկուրսիաներ դեպի կուլտուրա-պատմական, օգտակար հանածոների, դեպի քաղաքացիական կռիվների վայրերը և այլն:

Շրջանային ժողովրթբաժինների վրա է ընկնում գավառագիտական աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման ողջ պատասխանատվությունը: Նրանք պետք է գործի մեջ լայնորեն ներգրավեն զպրոցները--աշակերտությանը, ուսանողներին, ուսուցիչներին, առաջավոր դեր ունեն կատարելու նաև պրոֆիտությունները, ահուժբները, պիոներական և հատկապես՝ կոմերիտական կազմակերպությունները:

Սովետական գավառագիտության աշխատանքները պատշաճ բարձրության վրա դնելու համար պետք է բոլոր շրջաններում ստեղծել գավառագիտական թանգարաններ և այնտեղ կենտրոնացնել ողջ աշխատանքը:

Այդ թանգարանները աշխատանքներում ներգրավել շրջանի ողջ գավառագիտական ակտիվը, այդպիսով՝ ամենալայն մասսաների համար մենք հնարավորություն կստեղծենք հաղորդակից լինելու մեր երկրի սոցիալիստական շինարարությանը, խորագես ուսումնասիրելու մեր լայնածավալ երկիրը *):

Ի՞նչ է ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեր երկրում ունենք հազարավոր գավառագետներ, դա ապացույց է այն բանի, որ մեր մեծ ու հզոր հայրենիքն ուսումնասիրելու, այն ճանաչելու ցանկությունը շատ մեծ է սովետական ժողովրդի մեջ:

*) Այս հոդվածը արտատպվում է մեր՝ «Մոսկովային» գավառագիտության թիմի կողմից՝ բարձրագույն լրացումների և նոր խմբագրությամբ՝ Վ. Դ.

Բանվորները, կոլտնտեսականները, ինտելիգենտները, ծառայողներն ու մասնագետները, մեր բազմահազար զպրոցականներն ու երիտասարդությունը ծարավի են մոտիկից ճանաչելու և ուսումնասիրելու մեր ծաղկող ու երջանիկ կյանքով ապրող աշխատավորների իսկական հայրենիքը: Նրանց հետաքրքրում է այն ամենը, ինչ օգտակար է և ինչ նպաստում է սոցիալիստական հայրենիքի ամրապնդմանը, բարգավաճմանը, պաշտպանունակությունը:

Այժմ մեր երկրում ունենք բազմաթիվ պատանի և երիտասարդ գավառագետ կոմերիտականներ ու պիոներներ, որոնք հրակայական օգտակար աշխատանք են կատարում: «Ուղղում եմ օգտակար լինել մեր սիրելի հայրենիքին, ուղղում եմ օգնել սոցիալիստական շինարարությունը»--անաթե ինչ ցանկություն է ոգեշնչում և առաջ մղում պատանի ու երիտասարդ գավառագետին:

Գավառագիտությունը, որ բառացի նշանակում է «գավառը դիտենալ», այսինքն՝ ճանաչել տվյալ վայրը, պայմանական նշանակություն ունի և դեռ չի արտահայտում այդ հասկացողություն ողջ էությունը, նշանակությունը: Դեռևս մեր որոշ գավառագետների մոտ գոյություն ունի այն թյուր կարծիքը, թե գավառագիտական ուսումնասիրությունների օրեկտը պետք է հանդիսանա միմիայն շրջանը, առանձին՝ վայրը, գյուղը, քաղաքը:

«Գավառագիտությունը չի կարող ընդգրկել ողջ ռեսպուբլիկան. այն ժամանակ դա գավառագիտություն չի լինի» ասում են այդ կարծիքի կողմնակիցները:

Անշուշտ, սխալ է հարցի այդպիսի մեկնաբանումը: Ուրեմն ի՞նչ է գավառագիտությունը:

Սովետական գավառագիտությունը այդ սովետական հայրենագիտությունն է, մեր հայրենիքը ճանաչելու, ուսումնասիրելու միլիոնավոր աշխատավորների բուռն ցանկությունը: Իսկ մեր հայրենիքը պարզ է, որ չի սահմանափակվում շրջաններով, ուրեմն և գավառագիտական ուսումնասիրությունների օրեկտը չի կարելի սահմանափակել շրջաններով կամ մի ռեսպուբլիկայով, այլ այդ ուսումնասիրություններն ընդգրկում են ողջ Սովետական Միությունը, բոլոր ժողովուրդների մեծ հայրենիքը:

Մեր կոլտնտեսականի, բանվորի, ինտելիգենտի, դպրոցականի բուն ցանկութիւնն է ուսումնասիրել ոչ միայն իր կոլտնտեսութիւնը, իր շրջանը, իր վայրը, այլ նաև մեր երկրի կենտրոնական մասերից մինչև հեռավոր ծայրամասերն ընկած հետաքրքիր օբեկտները, գործարանները, հանքերը, կոլտնտեսութիւնները, պատմական նշանակութիւն ունեցող հետաքրքիր վայրերը և այլն:

Մեր երկրի, ռայոնի, բնակավայրի ճանաչողութիւնը, պատմութիւնը, անցյալում բանվորների և գյուղացիները կողմից շահագործողների դեմ մղած պայքարի հերոսական օրերի և դեպքերի ուսումնասիրութիւնը, բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրութիւնը, օգտակար հանածոների հայտնաբերումը, տեղական ֆոլկլորի, ազգագրութեան, հնութիւնների ուսումնասիրութիւններն ու հավաքը—ահա այս բոլորը հարստացնում է գաժառագեսի գիտելիքները և օգնում է նրան ճանաչելու մեր երկրի անցյալն ու սքանչելի ներկան:


1932 թվին, ՄՍՌՄ ընդերքի միութենական հետախուզութիւններ կազմակերպելու առնչութեամբ «Կոմսոմոլսկայա Պրավդա»-յի խմբագրութեանն ուղղած իր նամակում ընկ. Վ. Վ. Կոյբեշևը գրել է.

«Մենք դեռևս քիչ ենք ճանաչում մեր երկիրը: Մենք պետք է ճանաչենք մեր երկիրը: Այս խնդիրը չի կարելի կատարել միայն մասնագետ երկրաբանների ուժերով, հետախուզական խմբերի միջոցով, որոնք ուղարկվում են մեր գիտական և տնտեսական մարմինների կողմից:

Մեր բնական հարստութիւնների ուսումնասիրութիւնը չի կարելի պատկերացնել առանց բանվոր դասակարգի շարքերից գործի մեջ ներդրավելու կամավոր աշխատողների լայն մասսաներին»:

Ընկ. Կոյբեշևի այս նշանակալի խոսքերը պետք է միշտ հիշել երբ խոսքը վերաբերում է մեր երկիրը ճանաչելուն: Պարտիան պարզ և որոշ խնդիր է դնում բոլոր շրջանային կազմակերպութիւնների առաջ—լրջորեն զբաղվել շրջանի տնտեսութեան հարցերով:

Համ Կ(բ)Պ 18-րդ համագումարը և ստալինյան Կենտրոնական Կոմիտեի Մայիսյան պլենումն իրենց պատմական որոշումների մեջ նշել են այն խնդիրների մասին, որոնք



Արշակ մանակիցները երկրի մասնակ

աներկբայորեն ծառանում են յուրաքանչյուր շրջանային պարտիական կազմակերպության առաջ:

Այդ որոշումների կապակցությամբ «Պրավդան» գրում է.

«Արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը ճանաչելը, էկոնոմիկայի մեջ թափանցելը, ընդերքում թաքնված հարստությունների հայտաբերումը, օգտակար հանածոների, գետերի, լճերի լայն օգտագործումը, — սրանք են շրջանային ղեկավարների խնդիրները: Չլողալ մակերեսորեն, այլ անտեսվար ձևով գիտենալ և բոլորեկորեն տնօրինել ամեն բան, ինչ որ կա շրջանում, ահա թե ինչ է պահանջում պարտիան ամեն մի շրջանի, մարզի, երկրամասի, շրջանային ղեկավարներից»: («Պրավդա» 26|II 1940 թ.):

Իսկ այդ անելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր շրջանային աշխատող լավ ծանոթ լինի իր շրջանին, անտեսությունը, երկրի ընդերքում թաքնված հարստություններին, նրանց օգտագործման հնարավորություններին և այլն: Մեր երկիրը ճանաչելու և նրա անսպառ հարստություններն ուսումնասիրելու կարևոր խնդիրները դրվում են նաև ամենալուրջ կերպով մեր երիտասարդության, դպրոցականների առաջ: Այդ մասին դարձյալ «Պրավդան» գրում է.

«Ճանաչել իր երկիրը, իր ուսյունը, գիտենալ նրա պատմությունը, նրա հարստությունները, գիտենալ, ինչ կա թաքնված հարադատ երկրի ընդերքում, ճանաչել ընտելությունը և ոչ միայն ճանաչել, այլև սովորել ավելի լավ օգտագործել այն մարդու բարօրություն համար, սոցիալիստական հասարակության բարօրության համար — ինչպիսի ազնիվ և պատվավոր աշխատանք, ինչպիսի հզոր ազդեցություն ունի համար, հոյակապ միջոց երիտասարդության մեջ դաստիարակելու գիտողականություն, հնարագիտություն, նախաձեռնություն... սրա անունն է գավառագիտություն»: («Պրավդա» — 25|V 1940 թ.):

Այստեղից պարզ է, որ սովետական գավառագիտությունը ոչ թե մի ապաքաղաքական գործ է, այլ լայն մասսայական խորապես քաղաքական, կուլտուրական մեծ գործ, սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմանը նը-

պաստող, ՍՍՌՄ աշխատավորության կուլտուրայի զարգացմանը նպաստող գործոններից մեկը, մեր մեծ երկիրն ու առանձին շրջանները բազմակողմանի ու գիտականորեն ուսումնասիրելու մի արժեքավոր միջոց:

ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՎՆԵՐ

1. ԱՐՇԱՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՆԸ

Յուրաքանչյուր գավառագիտական արշավ պետք է նախապատրաստել մանրակրկիտ կերպով, նախօրոք մշակել մարշրուտը, կոնկրետ խնդիր ստանալ. պարզել, թե ինչպիսի հանդերձանք պետք է ունենալ, արշավի մասնակիցներին ապահովել սննդամթերքով, երթային և դաշտային իրերով: Անհրաժեշտ է ձեռք բերել նաև համապատասխան գրականություն, քարտեզներ, և շնկատում մշակել արշավի կոնկրետ առաջադրանքը:

2. ՄԱՐՇՐՈՒՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Գավառագիտական արշավի հաջողությունը կախված է նախ այն բանից, թե որքան ճիշտ է ընտրված մարշրուտը: Ընտրած մարշրուտը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

1. Անցնել մեծ մասամբ անտառապատ, չոր ու առողջ կլիմա ունեցող վայրերով:
2. Ընտրած վայրում լինեն գավառագիտական հետաքրքրական օբեկտներ:
3. Գետ կամ լիճ լինի լողանալու համար:

Ընտրած մարշրուտն, այդ ընդերքից բացի, առաջադրված խնդրի կատարման համար պետք է ունենա նաև անհրաժեշտ նախադրյալներ՝ գեոլոգիական, աշխարհագրական, ռևոլյուցիոն շարժումների, քաղաքացիական կռիվների պատմության վերաբերյալ տեղեկություններ հավաքելու համար: Ինչպիսի մարշրուտ էլ որ ընտրած լինի գավառագիտական արշավ կատարող խմբակը, պարտադիր կերպով պետք է գեկավարվի հմուտ կոնսուլտանտի ցուցմունքներով, համապատասխան գրականությունը ու քարտեզներով:

3. ՄԱՐՇՐՈՒՏԻ ՇԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆԸ

Նախքան գավառագիտական արշավի դուրս գալն անհրաժեշտ է կատարել մարշրուտի հետախնդրություն: Այդ հետախու-

20833-59



գությունը պետք է կատարել արշավից 7—10 օր առաջ, 3—4 հոգուց բաղկացած ֆիզիկական ավելի առողջ և իրենց ընդհանուր պատրաստութեամբ ավելի զարգացած խմբի միջոցով:

Հետախուզութեանը նպատակ ունի նախօրոք պարզել ու որոշել հետևյալ խնդիրները.

1. Արշավի շարժման ուղին և նրա հիմնական կետերը.
2. Ամբողջ մարշրուտի և նրա առանձին կետերի տարածութեանը (կիրժմատրերով).
4. Հանգստանալու, լողանալու և սնվելու համար հարմար վայրերը.

5. Գավառադիտական ուսումնասիրութեան համար նշանավոր օբեկտները (կրթատեսուցութեաններ, խորհանդեսութեաններ, անտառ, դաշտ, մարգագետին, ձոր, գործարան, օգտակար հանածոների վայրեր, պատմական հուշարձաններ և այլն):

Հետախուզելով մարշրուտը, պետք է լուծել նաև մի շարք կազմակերպչական հարցեր: Դրանք են՝

1. Ճշտորեն որոշել արշավի դուրս գալու օրը, ժամը, ինչպես նաև ամբողջ մարշրուտի վրա ընկած օբեկտների ուսումնասիրութեան ժամանակը.
2. Եթե խմբին ինքը ճաշ չի պատրաստելու՝ սննդով ապահովելու պայմանները:

4. ԱՐՇԱՎԻ ՄԱՍՆԱԿԻԳՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Լուրջ ուշադրութեան պետք է դարձնել արշավի մասնակիցների ճիշտ ընտրութեանը: Արշավի մասնակիցներին պետք է ընտրել ըստ տարիքի: Օրինակ՝ մի խումբ բաղկացած լինի 10—12 տարեկաններից, մի այլ խումբ 12—14 տարեկաններից և վերջապես՝ 14—16 տարեկաններից:

Տարիքային ընտրութեանն անհրաժեշտ է մի շարք երթային կանոններ ճշտորեն պահպանելու և երեխաների առողջութեանը չհասնելու համար: Տարիքային ընտրութեանից բացի պետք է ուշադրութեան դարձնել նաև արշավի մասնակիցների առողջական վիճակի վրա, ու պետք է ընտրել միմիայն առողջներին:

Արշավի մասնակիցներին անհրաժեշտ է բժշկական քննութեան ենթարկել, ինչպես արշավից առաջ, այնպես էլ արշավից հետո:

• Խումբը պետք է բաղկացած լինի ոչ ավելի քան 15—20 հոգուց:

Խումբը ղեկավարում է ջոկատի կամ ճամբարի փորձված ավագ ջոկատավարը: Խմբի ղեկավարը պատասխանատու է խմբի համար և նրա բոլոր կարգադրութեանները, որպես դիպցիպլինայի պահպանման կանոն, պետք է կատարվեն առանց որևէ առարկութեան:

5. ԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐ

Խստորեն պետք է պահպանել օրվա անցումների կիրժմատրերի հետևյալ նորմաները:

10—12 տարեկաններից կազմված խմբերի համար	8—9	կիրժմատր.
12—14 » » » » »	12—13	»
14—16 » » » » »	15—16	»

Այս նորմաները հոգնեցուցիչ չեն լինի, եթե իհարկե անցումները կատարվում են դանդաղ, համաչափ քայլերով: Ավելի տարիքավոր, փորձված տարիքայինները միշտ քայլում են դանդաղ, հանգիստ քայլերով: Մտկայան արշավի սկզբից, ինչպես և վերջում պետք է քայլել սովորականից ավելի դանդաղ: Նորմալ շարժումը պետք է լինի այսպես.

10—12 տարեկանների համար	2 ¹ / ₂ —3	կիրժմատր	1	ժամում
12—14 » » » » »	3—3 ¹ / ₂	»	»	»
14—16 » » » » »	3 ¹ / ₂ —4	»	»	»

Թե օրական անցումների և թե շարժման արագութեան այս նորմաները տրվում են միմիայն սովորական հարթ վայրերով շարժման համար, իսկ եթե խումբը քայլում է լեռնոտ վայրերով, խիստ խորդ ու ջորդ տեղերով, անշուշտ այս նորմաները պետք է նվազեցնել: Բացի դրանից, պետք է խուսափել նաև ավտոններով կամ երկաթուղով ճամբորդելուց, որովհետև նման անցումները կստեղծեն ևս երեխաներին:

6. ԱՐՇԱՎՆԵՐԻ ՌԵԺԻՄԸ

Յուրաքանչյուր արշավ պետք է ունենա ճիշտ մշակված ռեժիմ այսինքն՝ պետք է ճշտորեն որոշված լինի դուրս գալու ժամը, քայլելու, կանգառումների տեղերն ու ժամերը, սնվելու, քնելու ժամերը և այլն:

Առանց այդպեսի խիստ ու որոշակի մշակված ռեժիմի՝ ամեն մի գավառադիտական արշավ, թեկուզ մի քանի կիրժմատր ճամբորդութեան ղեկավարում, շատ կհոգնեցնի և կհյուսի մասնակիցներին:

Ստորև առլիս ենք արշավի մի օրինակելի ակտիմ.

Վեր կենալը	առաջնայան ժամը	6-ին.
Ելույթը	»	7-ին.
Առաջին կանգառը	»	7-30—7-35 ր.
Քայլելը	»	7-35—8-15 ր.
Երկրորդ կանգառը	»	8-15—8-25 ր.
Քայլելը	»	8-25—9-15 ր.
Երրորդ կանգառը	»	9-15—9-25 ր.
Քայլելը	»	9-25—10-25 ր.

Սեժ գաղարը (հանգստանալ, լողանալ, ճաշել, էքսկուրսիա կատարել, թեյ խմել) 10-25—4 ժամ.

Հավաքը և ելույթը 4-30-ին.

Քայլել գաղարներով 4-30—8-ը.

Վերջնական կետին հասնելը ընթրիք 8—9-ը.

Ք ու ն 9-ից.

Քայլում են ազատ շարժերով, իրարից չբաժանվելով: Առջևից գնում է մեկը՝ «առաջավորը», որից առաջ անցնել ոչ ոք չի կարող. վերջից գալիս է մեկ ուրիշը՝ «վերջավակողը», որից ետ մնալ ոչ ոք չի կարող. այս կարգը խախտելու դեպքում, երբ խումբից մի քանիսն առաջ անցնեն կամ ետ մնան, —սուժը կշարժվի ցած ու ցրիվ շարժերով, կարող են իրար կորցնել, դժբախտ դեպքերի պատճառ դառնալ և այլն:

Յուրաքանչյուր 30—40 րոպե, ապա 50—60 րոպե քայլելուց հետո պետք է կարճատև հանգիստ առնել 5—10 րոպեի սահմաններում: Շարժման ժամանակ հաճախ կարող է զավառադիտական արշավի մասնակիցները դաշտում՝ բնության զրկում հանդիպեն գուլնդուլն ծաղիկների, դանադան պտուղների, օգտակար հանածոների նմուշների, հետաքրքրական վայրերի, միջատների և այլն: Այսպիսի դեպքերում պետք է շարժվել փոքրիկ կանգառներով, որպեսզի արշավի մասնակիցները հնարավորություն ունենան ծաղիկ և պտուղ քաղելու:

Հասնելով մեծ գաղարքը, կամ նշանակված վայրը, խուճըն ընտրում է մի զով տեղ և անմիջապես հանգստանում է (պառկում կամ նստում), ապա, եթե մոտերքում գետ կա՝ լողանում են 10—15 րոպե: Այդ միջոցին նշանակված հերթապահները զբաղվում են ճաշ պատրաստելով: Ծաղից հետո լրիվ մեկ ժամ հանգ

դիստ է տրվում, որից հետո արշավի մասնակիցները դիտում են վայրը, ուսումնասիրության ենթարկում համաձայն իրենց արըված խնդրի, ապա թեյ են խմում և մի փոքր հանգստանալուց հետո կամ վերադառնում են, կամ, եթե շարունակելու են ճամփորդությունը, նախ քան ուղևորվելը քնում են:

Անհրաժեշտ է, որ զավառադիտական արշավի մասնակիցները բաժանվեն մի քանի խմբերի և յուրաքանչյուրն ստանա կոնկրետ առաջադրանք: Օգտակար չէ, երբ երեխաներին տալիս են մի քանի խնդիր. —այդպիսով նրանք ցրվում են և արդյունքը քիչ է լինում: Այսպես օրինակ՝ պատանի զավառադետ-պատմաբաններին խմբակն ուսումնասիրում է վայրի անցյալ պատմությունը, պատմական հուշարձանները, սեռուցիկն շարժումների պատմությունը, գյուղի կառուցման պատմությունը, կոլտնտշարժման պատմությունը, և այլն: Պատանի ֆոդկոր հավաքողների խմբակը զրի է առնում հետաքրքրական լեզվաբաններ, հեքիաթներ, երգեր ու պատմություններ: Պատանի զավառադետ-երկրաբաններին խմբակն ուսումնասիրում է վայրի երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոների կոլեկցիաներ է հավաքում, հետաքրքրվում է՝ չկան արդյոք նոր, դեռևս չօգտագործված հանքավայրեր, դրի է առնում այդ բոլորը և եթե հայտարարում է նոր հանքավայրեր, ապա այդ մասին հայտնում է համապատասխան կազմակերպություններին: Ուսումնասիրում է ջրերը և հայտարարում նոր հանքային աղբյուրներ: Պատանի բնագետների խմբակն ուսումնասիրում է վայրի բուսական և կենդանական աշխարհը: Նրանք ոչ միայն հավաքում և հերթաբիրում են կազմում տեղական բույսերից, այլև հայտարարում են նոր բույսեր, նոր դեղաբույսեր և կուլտուրական նշանակություն ունեցող այլ բույսեր:

Այսպիսով, արշավի մասնակիցներից յուրաքանչյուրն ստանալով կոնկրետ խնդիր, ամբողջ արշավի ընթացքում ձգտում է այդ խնդրի կատարմանը:

Ծամփորդության ընթացքում գաղարքի տեղերն ընտրելիս, պետք է ձգտել ընտրել սովորոտ և չոր տեղեր: Մեծ գաղարները ավելի լավ է կազմակերպել դեպքերի բարձր ավերին կամ անտառի եզրերին՝ չոր բացատներում:

Հաղուստը պետք է լինի թեթև և մարմնի վրա ազատ, որպեսզի շարժումներն էլ ազատ կատարվեն: Արևահարությունից և այլվածքներից խուսափելու համար թեքերը, վիղը և գլուխը պետք

է ծածկելով՝ պահել: Արշավի մասնակիցները կոշիկները պետք է լինեն ոտքին համապատասխան, այնպես, որ չսեղմեն ոտքը և ցածր կրունկ ունենան:

7. ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ

Գավառագիտական արշավի ընթացքում լուրջ ուշադրութեան է արժանի արշավի յուրաքանչյուր մասնակցողի անձնական հիգիենան: Պետք է խուսափել փոշոտ ճանապարհով կամ երկաթուղու գծի վրայով քայլելուց, ավելի լավ է միշտ քայլել արահատներով և հով տեղերով: Մանավանդ, եթե ճանապարհին անտառ կա:

Որպես կանոն պետք է ընդունել երբեք չքայլել արևի տակ: հաճախ ավելի լավ է ճանապարհը երկարացնել՝ անտառով, հովով գնալու համար:

Լուրջ ուշադրութեան պետք է դարձնել նաև յուրաքանչյուրի անձնական հիգիենայի վրա: Այսպես օրինակ՝ միշտ մաքուր պահել ատամները, ճաշից առաջ լվանալ ձեռները, ճաշից հետո ողողել բերանը և այլն: Առանձնապես կարևոր է ուշադրութեամբ խնամել ոտները, կարելի էլուրդները արշավից առաջ և հետո, նույնպես և մեծ դադարներին լվանալ ոտները, բուժել կոշտուկները (մազուկները), սորոքվածքները և քերծվածքները: Չի կարելի ստաբիլ քայլել կամ պահել խոնավ դետի վրա: Պակելուց առաջ կարելի է գետնին փռել վերարկուն կամ սլաշը: Մեծ նշանակութեան ունի նաև ճանապարհին ճիշտ կերպով սնվելը և ջրի գործածութեանը: Ոչ մի դեպքում չի կարելի ուտել քայլելիս կամ կանգնած:

Արշավից առաջ անհրաժեշտ է կուշտ նախաճաշել, մեծ դադարքին՝ մոտ ցերեկվա ժամի 12-ին՝ ճաշել (տաք կերակուր) հանգստանալուց հետո՝ վերադարձից առաջ թեյ խմել:

Ճանապարհին չի կարելի շատ ջուր խմել: Դա քրտինք է առաջացնում և թուլացնում է օրգանիզմը: Չուրը խմում են միայն մեծ դադարքներին, փոքրիկ կումկրով և 10—15 րոպե հանգստանալուց հետո:

Որևէ դժբախտ դեպքում առաջին օգնութեան հասցնելու համար վերցնել մի փոքրիկ դեղարան և վիրակապական էրեք:

Այս բոլորն այն նվազագույնն է, ինչ պետք է դիտանան ամենքը, ովքեր մեկ-երկու կամ երեք օր տեղաթոյնված գավառագիտական արշավի են դուրս գալիս:

8. ԱՐՇԱՎԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Գավառագիտական արշավից վերադառնալուց հետո ամփոփվում են արշավի արդյունքները: Կարգի են բերվում հավաքած նյութերը, օգտագործում այն պատի թերթի համար և այլն:

Արշավի արդյունքները մասսայականացնելու տեսակետից խոշոր նշանակութեան ունի տեղում, ճամբարում գավառագիտական ցուցահանգետ կազմակերպելը: Այդ ցուցահանգետում ցուցադրվում են մարքուտի հետաքրքիր վայրերի լուսանկարները և գեոլոգիական, բուսական, կենդանական և այլ բնույթի հավաքած ողջ կոմպլեկտները: Այս ցուցահանգետը մեծ հետաքրքրութեամբ լինում առաջ կրելի պիտեբրական ջոկատներում ու ճամբարներում և դեպի իրեն կգրավի նաև տեղական ազգաբնակչութեանը: Եթե վայրում չըջանային գավառագիտական կամ հնագիտական թանգարան կա, ապա լավ կլինի գավառագիտական արշավը կատարել նրա հետ համաձայնեցված և վերջում ցուցահանգետը կազմակերպել թանգարանում: Այս դեպքում գավառագիտական արշավի արդյունքները ավելի մեծ կլինեն:

Ջոկատներին կարելի է հանձնարարել հետևյալը.— ճամբարում ունենալ գավառագիտական արշավների հուշատետրեր, որտեղ գրել. 1. արշավի մարշրուտը, 2. կլիմատորափը, 3. անցումների տեղաթոյնը, 4. դադարները, 5. ուսումնասիրած և այցելված վայրերը, 6. խմբի կազմը, (թիվը, ազգանունները, տարիքը, ջոկատը), 7. արշավի հերթապահները և պատասխանատուները: Ցանկալի է հուշատետրում ունենալ մի բաժին, որտեղ երիտաները գրեն ապավորութեաններն ու ցանկութեանները:

9. ՈՒՋՄԱԿԱՆՑԱԾ ԱՐՇԱՎՆԵՐ

Գավառագիտական արշավները պիտեբրական ջոկատներում և ամառային ճամբարներում կարող են կրել նաև ուղեմականացված բնույթ: Այս դեպքում արշավի գավառագիտական ուսումնասիրութեաններին ծրագիրը խիստ փոփոխութեան է ենթարկվում: Ուսումնասիրութեան ենթակա օբեկտները մեծ մասամբ կրճատվում են՝ թողնելով անհրաժեշտ որևէ խնդիր: արշավի ծրագրի մեջ մտցվում է ուղեմական կարգ ու կանոն, տրվում է նաև կոնկրետ ազգական խնդիր: Բացի սովորական երթուղիի հանդերձանքից, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր մասնակցողին, ինչպես օրինակ՝ մեջքի սլաշուսակ (կամ ուղեղակ), ջրա-

ման (կամ տերմուս), զլուան (վերաբերուի կամ աղյալի), իսկ ընդհանուր արշավի համար նաև ճաշի աման, թեյնիկ, կացին կամ բահ,—ապրմականացված արշավի դեպքում պետք է վերցնել նաև հակազաղեր և այլ անհրաժեշտ իրեր: Կան երթային այնպիսի անհրաժեշտ իրեր, որոնք առաջին հայացքից շատ անհրաժեշտ են արշավի համար: Սովորելով երթային կյանքին, կողմնորոշվելով բոլոր տեսակի դժվարին պայմաններում, սովորական պայմաններում հաճախ անպետք կամ ավելորդ թվացող բաներն էլ կարելի է օգտագործել: Օրինակ՝ երթի ժամանակ չի կարելի ներքնակ վերցնել հետը, բայց հեշտությամբ կարելի է ծառի չորացած ճյուղերից ներքնակ պատրաստել գիշերը քնելու համար:


Մահայն այդ խնչպես կարելի է անել: Դեռ սկզբից հավաքում են չորացած ծառի ճյուղերը և ցանցածև իրար վրա դասավորում, որն ապահովում է նաև խոնավությունից: Այնուհետև այդ ցանցի վրա դասավորում են ճյուղերը,—լավ է վերցնել փրշատերև ճյուղեր,—բայց այնպես են դարսում, որ ճյուղերի ոստերը, որոնք սեղմում են ճյուղերը, հակառակ կողմն են ընկնում: Ստացվում է մի տեսակ դսպանակավոր ներքնակ: Բարձր փոխարեն կարելի է գործածել մեջքի պայուսակը, մեջք խոտ կամ չորացած տերևներ լցնելով:

Փորձված ճանապարհորդը միշտ էլ կարող է ստեղծել իր համար բոլոր հարմարությունները, թեկուզ յուրաքանչյուր նախնական բնական պայմաններում, օգտագործելով ամեն տեսակի հարմարություն ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով:

10. ԲԻՎԱԿԻ ԶԱՇԱՑՈՒՑԱԿԸ

Արշավի համար պետք է անհրաժեշտ սնունդ վերցնել կարելի է պատրաստել այսպիսի ճաշ—առաջին տեսակը՝ սուպ կոնսերվից (միս-սիսեռ, միս-կաղամբ, միս-մակարոն և այլն) կամ թե տաբլետկաներից (լոբի, սոյա, սիսեռ և այլն): Լավ կլինի այսպիսի սուպի վրա լցնել տապակած սոխ և ալյուրից խոռս անել: Կարելի է կարտոֆել պցել բոլոր տեսակի սուպերի մեջ:

Եթե որևէ տեսակի կոնսերվա չկա, ապա սուպ կարելի է եփել բանջարեղենից և կարտոֆելից՝ յուղով: Երկրորդ տեսակը կարելի է պատրաստել կաշա—ձավալից կամ պերլովի կրուպայից: Կարելի է երկրորդ պատրաստել վերմիշից, մակարոնից, լապչալից, եփել և տրորած պանիր լցնել վրան:



Նկ. 3. Գևտաշեն.—Չայ-Դոշանի կամուրջի պարսկերեն արձանագրությունը

Մեկ մարդու օրնական սննդի օրինակելի նորման է՝	
Հաց (սպիտակ և սև)	600 գրամ
Միս	100 »
Կամ ձուկ	200 »
» կոնսերվ	մեկ բանկա
Զանազան բանջարեղեն	300 գրամ
Կրուպն (դանադան)	75—100 »
Շաքար	50 »
Յուղ (կենդանական և բուսական)	50—70 »
Կաթ	0,5—1 կիլոգրամ
Աղ և թեյ	ըստ ցանկության

11. ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՅԱՑՈՒՅԱԿ

Նախքան գավառագիտական արշավի դուրս գալը, արշավի մասնակիցները բացի մարջրուտը գծելուց շատ ցանկալի է, որ համապատասխան գրականութուն կարդան ուսուցիչությունն ենթակա վայրի պատմական անցյալի, գեոլոգիական, աշխարհագրական, բուսական, կենդանական հարստութունները և սոցիալիստական շինարարության մասին:

Բացի դրանից, լավ կլինի զրույցներ կազմակերպել համապատասխան մասնագետներին հետ նշված հարցերի շուրջը, որից հետո միայն հարցացուցակ տալ արշավի մասնակիցներին: Գավառագիտական արշավի նպատակը չէ անվիճելի ճշմարտութուններ ու փաստեր տալ երեխաներին, որից հետո նրանք այլևս անելիքներ չեն ունենա: Ո՛չ, այդպես չէ: Գավառագիտական արշավի նպատակն է երեխաների մեջ դարգացնել մտքի ձևումութուն, հնարագիտութուն, նախաձեռնութուն, գիտելու ընդունակութուն: Այդ բոլոր ճշմարտութուններին պետք է հանդիս արշավի յուրաքանչյուր մասնակիցն ինքը, անհատապես իր կատարած աշխատանքով, շրջապատի գիտողութունից հանելով իր սեփական եզրակացութունները:

Ահա թե ինչո՞ւ գավառագիտական ուսուցիչությունների ընթացքում լայն նախաձեռնութուն պիտի տալ երեխաներին, օգնել նրանց խելացի խորհուրդներով, կոնսուլտացիաներով:

Գավառագիտական հարցացուցակը կազմվում է զանազան բնագավառների համար առանձին-առանձին: Այստեղ մենք տալիս ենք մի օրինակելի հարցացուցակ, որի հիման վրա երեխաները կատարում են իրենց ուսուցիչությունները:

1. Տեղացիները գիտեն արդյոք, թե անցյալ դարերում ովքեր են ապրել այդ վայրում կամ գյուղում:

2. Ո՞ր թվականին և ո՞վ է հիմնադրել գյուղը. ցույց տալ, թե որտեղ է գրված գյուղի անցյալ պատմութունը:

3. Գրի առնել բնակավայրի հիմնադրման մասին գյուղում եղած ավանդութունները, հիմնադրի անունը, աղագանունը, սեուր, հասակը, սոցիալական դրութունը, որտեղից է եկել, ինչպե՞ս է հիմնվել տեղում, ում դեմ է պատերազմել և ինչ պատերազմներ է մղել:

4. Չե՞ն մտադրել արդյոք նախկին կառուցումների հետքեր, (որտեղ, ինչպիսի): Ո՞ւմ են պատկանել այդ կառուցումները: Չե՞ն պահպանել արդյոք առաջին բնակիչների տնային կամ հասարակական գործածության զանազան իրեր:

5. Չի՞ փոխադրվել գյուղն արդյոք մի տեղից մյուս տեղը, ցույց տալ գյուղի հին տեղը և պարզել փոխադրվելու պատճառները:

6. Գյուղի զանազան թաղամասերը ինչպե՞ս էին կոչվում առաջ, և ինչպե՞ս են կոչվում հիմա (Նույնը գյուղի ձորերի, դաշտերի մասին), որտեղից են ծագել այդ անունները, իմանալ դրանց նշանակութունը:

7. Հավաքել բանահյուսության նմուշներ, պատմվածքներ առտկներ, առածներ, բանաստեղծութուններ—աշուղական երգեր, որոնք կապված են տեղական պատմական անցյալի որևէ հետաքրքիր դեպքի հետ:

8. Հավաքել պատմութուններ օտարերկրյա արշավանքների, հարևան գյուղերի հետ ունեցած վեճերի, քաղաքացիական կռիվների մասին: Հնարավոր չափով թվեր, փաստեր ու բացատրություններ գրի առնել այդ դեպքերի ժամանակաշրջանի, պատճառների և հետևանքների մասին:

9. Տեղական դեպքերի մասին որևէ ժամանակագրութուն կամ, որտեղ է՞:

10. Ի՞նչ գիտական աշխատութուններում և ղեկարվեստական երկերում է նկարագրված տեղի պատմութունը և հնությունները:

11. Հավաքել տեղեկութուններ պատմական հուշարձանների (եկեղեցիներ և այլ շենքեր) կառուցման ժամանակի և պայմանների մասին, որով կարելի է պարզել տեղի պատմութունը:

12. Կան արդյոք գերիզմանատներում հին մահարձաններ, խաչքարեր, սեֆե են դրանք: Ի՞նչ է գրված նրանց վրա: Ցույց

նալ այդպիսի մահարձանները տեղը և յութաքանչյուրի դեղորձ
վեատական նշանակութեան աստիճանը:

13. Հավաքել տեղեկութեաններ տեղի ականավոր մարդկանց
կամ որևէ այլ բանով աչքի ընկած մարդկանց մասին:

14. Չեն պահպանվել արդյոք պատմութեաններ ճորտատի-
րական կարգերի մասին, տեղում ովքեր են եղել կալվածատե-
րեր, ինչպէս են վերաբերվել նրանք գյուղացիները հետ և այլն:

Այս բոլոր տեղեկութեանները հավաքելուց հետո, կարելի է
շատ հետաքրքիր նյութեր պատրաստել ցուցահանդեսի կամ տեղա-
կան հնագիտական—պատմական թանգարանի համար: Այսպէս օրի-
նակ՝ վայրի հին քարտեղը, գյուղի կամ վայրի պլանը տարբեր
ժամանակներում, կարելի է տալ գունավոր, փոփոխութեան տար-
բեր շրջաններով: Կարելի է տալ նաև գյուղի հին շինքերի, հու-
շարձանների լուսանկարները, գյուղի հին, պատմական գործիչ-
ների և սովետական շրջանի ականավոր մարդկանց նկարները:
Պետք է հավաքել հին մեղալիներ և զանազան պաշտոնական նշան-
ներ, իրեր, որոնք պատկանել են տեղի նշանավոր գործիչներին
կամ տեղացի պաշտոնյաներին: Պետք է կազմել վայրի, գյուղի
ժամանակագրութեանը և այլն:

Այսպիսի հարցապատասխան կարելի է կազմել բազմաթիվ այլ
ուսումնասիրութեանների վերաբերյալ՝ բուսական աշխարհի, կլի-
մայի, գեոլոգիայի առանձին հարցերի, կոլտնտըրթման, բնվո-
րուցիոն շարժումների պատմութեան և այլ շատ ու շատ հարցերի
վերաբերյալ:

Դավառագիտական նման ուսումնասիրութեանները մեծ հե-
տաքրքրութեամբ են կատարում երեխաները: Միայն թե այդ
գործը պետք է կատարել խնամքով և հոգատարութեամբ, օգնել
երեխաներին, ընթացք տալ նրանց հետաքրքրութեանը, բավա-
րարել նրանց հարցասիրութեանը:

Այս դեպքում արդյունքն ավելի մեծ կլինի:

Հազարավոր պիոներներ դուրս են գալիս ամառային ճամ-
բարներ, կամ ամառն անց են կացնում իրենց բնակավայրում:
Այդ ճամբարներում և բնակավայրերում պետք է կազմակերպել
հետաքրքրական գավառագիտական արշավներ դեպի մեր երկրի
զանազան անկյունները՝ մոտիկից ծանոթանալու և ուսումնասի-
րելու մեր հրաշալի հայրենիքը:

Օգնենք մեր պատանի բոցավառ հայրենասերներին՝ ճանա-
չելու և սովորելու մեր երկրի անցյալի պատմութեանը, հաղ-
թանակից-հաղթանակ ընթացող սոցիալիզմի երկրի փառահեղ
պատմութեանը:

ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ

Տ Ա Շ Ի Ր

I

Այժմյան Ալավերդու շրջանը մտնում էր պատմական Հա-
յաստանի Գուգարաց աշխարհի (նահանգի), Տաշիր գավառի մեջ:
Հայոց Արտաշես I-ին թագավորը (189—160 մ. թ. ա.) ա-
զատվելով սելևկյան տիրապետութեանից՝ հաստատում է հայկա-
կան թագավորութեանը. նա ընդարձակում է իր երկրի սահման-
ները՝ նվաճելով նաև Գուգարքը:

Արշակունյաց հարստութեան ժամանակ (66—429 թ. թ.) Տրդատ
3-րդ թագավորի կազմած հայ իշխանների աստիճանական ցու-
ցակում հայտնի է, որ Հայաստանի հյուսիսային սահմանակալ
գորահրամանատար է նշանակվում Գուգարաց նահանգի բղեշխը՝
22 վաստալ իշխաններով:

Սոսրով 2-րդ թագավորի ժամանակ (330—339 թ. թ.) վե-
րահաստատվում է հայ իշխանների վերոհիշյալ աստիճանական
ցուցակը և Գուգարքը դարձյալ համարվում է հյուսիսային կողմ-
նակալ բղեշխութուն:

Պապ թագավորի ժամանակ (368—374 թ. թ.) տեղի ունե-
ցած նախարարական խռովութեաններին մասնակցում է նաև
Գուգարաց բղեշխը: Սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը ճնշում է
այդ խռովութեանները և մյուս իշխանների հետ միասին գլխա-
տում նաև Գուգարաց բղեշխին:

Վարդանանց պատերազմի ժամանակ (451 թ.) Գուգարաց
բղեշխ է լինում Աշուշան, որը Տաշիրում տարածված կուպաշ-
տութեանը վերացնելու և ապստամբ ժողովրդին սաստելու նը-
պատակով Տաշիր է հրավիրում Մեսրոպ Մաշտոցին:

Վրաց Գորգասլան թագավորն իր տիրապետութեան

(440—495 թ. թ.) վերջին շրջանում վերցնում է Գուգարքը և այն բաժանում առանձին երեսօվներէ միջև, որից հետո Գուգարքը, սրա հետ նաև Տաշիրը, մնում է վրաց տիրապետութեան տակ:

Արարական տիրապետութեան ժամանակ (640—885 թ. թ.) արաբները նվաճում են նաև Գուգարաց աշխարհը: Սակայն Գուգարքը ժամանակ առ ժամանակ միանում է Վրաստանի հետ և ազատվում արաբական լծից. ընդ որում նա երբեմն հպատակվում է վրաց տիրապետութեան, երբեմն էլ կառավարվում ինքնուրույն կերպով:

10-րդ դարից սկսած Տաշիրում տիրապետում են Բագրատունիները, որոնք այստեղ հիմնադրում են Կյուրիկյան թագավորութունը, որը տևում է մինչև 13-րդ դարի կեսը (հիմնադիրը եղել է Աշոտ Ողորմած թագավորի որդին Կյուրիկե 1-ինը (982 թ.): Կյուրիկյան թագավորութեան շրջանում Տաշիրն ապրում է տրնտեսական և կուլտուրական ուժեղ վերելք, աշխուժանում է առևտուրը, կառուցվում և վերակառուցվում են բազմաթիվ վանքեր (Օձուն, Սանահին, Հախպատ, Քառասուն մանկաց և այլն) և ամրոցներ (Կայան, Կայծոն, Ախթալա և այլն):

Կյուրիկյան թագավորութունն առանձնապես ուժեղանում է Դավիթ Անհողի ժամանակ (989—1046), որը Տաշիրում շինում կամ վերաշինում է Լոռի բերդաքաղաքն իբրև վարչաքաղաքական կենտրոն, որից հետո Տաշիր գավառը (այժմյան Ստեփանավանի և Ալավերդու շրջանները) կոչվում է Լոռի:

Վրաց Դավիթ շինարար թագավորը (1089—1125 թ. թ.) ընդարձակելով իր թագավորութեան սահմանները՝ 1118 թ. տիրում է նաև Լոռին և այն հանձնում Օրբելյանների տոհմին:

Չաքարի 1-ի որդի Սարգիսը վրաց թամարա թագուհու (1184—1212 թ. թ.) կողմից նշանակվում է սպասալար և նրանից իբրև սեփականութուն ստանում է Լոռին: Սրա որդիները՝ Չաքարեն և Իվանեն թամարա թագուհու կողմից նշանակվելով հայոց և վրաց զորքերի հրամանատարներ՝ մի շարք հաղթական պատերազմներ են մղում սելջուկ-թուրքերի, արաբների և ուրբեշների դեմ ու Հայաստանի մյուս գավառների հետ միասին վերցնում նաև Լոռին:

Չաքարյանների ժամանակ ընդարձակվում են Հախպատի, Սանահինի, Քոբերի և այլ վանքերը, կառուցվում են Ախթալայի, Հոռոմայրի վանքերը, ինչպես նաև Սանահինի կամուրջը 1234 թ.:

Մոնղոլական արշավանքների ժամանակ, Հայաստանի հետ միասին, նվաճվում է նաև Լոռու գավառը. Չաղատա զորավարը 1237 թ. գրավում և ավերում է Լոռի բերդաքաղաքը և սրի անցկացնում նրա բնակիչներին:

13-րդ դ. վերջում Չաքարյանների տոհմը գնալով թուրանում է և վերջնականապես ընկնում, իսկ նրանց կալվածքները, այս թվում նաև Լոռին, վրաց Դիմիտր թագավորի կողմից 1284 թ. տրվում է գարձյալ Օրբելյանների տոհմին:

Լոռին մինչև 17-րդ դ. դառնում է մի ռազմական թատերաբեմ այն բազմաթիվ արշավանքների ու ասպատակութունների, որոնք կատարվում էին մոնղոլ-թաթարների և լեռնցի այլ ցեղերի կողմից:

Այնուհետև Լոռին անցնում է երբեմն վրաց տիրապետութեան տակ՝ 17-րդ դարում, երբեմն էլ պարսկական տիրապետութեան տակ՝ 18-րդ դարում, իսկ 1801 թվին Թբիլիսիի հետ միասին անցնում է ցարական Ռուսաստանի տիրապետութեան տակ:

Ճարական ինքնակալութեան տապալումից հետո Ալավերդին ևս անցնում է դաշնակցական-մաուղերիստական տիրապետութեանը: Ինչպես նախորդ հարստահարողների օրոք, այնպես էլ դաշնակ դիշատիչների ժամանակ Ալավերդին ենթարկելով անասելի ավերումների, սովի, թալանի, բռնադատումների ու կեղեքումների՝ կանգնում է բացարձակ կործանման առաջ: Ալավերդին այս խորտակումից ազատվում է 1920 թվին՝ Հայաստանում Սովետական իշխանութեան հաստատմամբ, որից հետո նա բանում է սոցիալիստական երջանիկ կյանքի վերելքի ուղին:

II

Հայաստանում քրիստոնեական և միջնադարյան հին կուլտուրան պարփակված էր վանքերում և եկեղիցիներում: Ժողովուրդն ապրում էր, ինչպես Քսենոֆոնն է նկարագրել՝ գետնափոր տներում, իսկ աշխարհիկ և հոգևոր էլիտաները՝ անմատչելի, անառիկ բերդերում, ամրոցներում և վանքերում:

I Ո Ռ Վ Ա Ձ Ո Ր Ը

Անցյալի այդպիսի բազմաթիվ հոյակապ հուշարձաններով հարուստ է Լոռվա ձորը, որը տարածված է Դեբեդ գետի ավազանի երկարութեամբ: Այս շրջանում հետաքրքիր հնագիտական պեղում-

ներ և ուսումնասիրութիւններ են կատարել հնագիտ Երիցյանը, ահադեմիկ Ն. Մառը, Դե-Մորգանը և ուրիշները: Այդ պեղումներէց երևում է, որ Լոռին անդրալուս հարուստ կուլտուրա է ունեցել: Ամբողջ Լոռում տարածված դամբարանները և այդ դամբարանների բրոնզե իրերը վկայում են այդ կուլտուրայի մասին, և այն մասին, որ Լոռվա նախնադարյան բնակիչները մշակելիս են եղել պղնձով հարուստ Լալվարի հանքերը:

Մեր թվագրութեան առաջին դարում խիստ նկատելի էր Հայաստանում ասորական և սասանյան կուլտուրաների ազդեցութիւնը: Այդ դարաշրջանի լավագույն ճարտարապետական հուշարձաններից է՝ Օձունի հուշարձանը:

Ո Ւ Ձ Ո Ի Ն Լ Ա Ր

Պատմական հուշարձանների մեջ հետաքրքրականն է Խաչ-Փունդ կոչված վանքը, որը կառուցված է 735 թվին: Նրա կամարների տակ կան օրնամենտներ, որոնք սասանյան (հին պարսկական) ոճ ունեն:

Ա Լ Ա Վ Ե Ր Դ Ի

Այստեղ են գտնվում Անգրկովկասում պղնձի հանույթի և ձուլման ամենամեծ գործարանները, հիդրոէլեկտր, գլխավոր էրկտրոմեխանիկական արհեստանոցները և մի քանի այլ ձեռնարկութիւններ: Պղնձի հանքերը գտնվում են Լալվար գետակի ջրիցին հոսանքի կիրճում, Ալավերդու երկաթուղու կայարանից մի քանի կիլոմետր հեռու: Այդ հանքավայրերի շահագործումն սկսվել է սրանից մոտ 150 տարի առաջ, բայց կանոնավոր շահագործվել են միայն 1874 թվից, երբ հունական ընկերութիւնից անցնում է Ֆրանսիական կոնցեսիոներների ձեռքը—կովկասյան արդյունաբերական մետաղագործական ընկերութեանը: 1914 թվի իմպերիալիստական պատերազմի ժամանակ աշխատանքը հանքերում դադարեցրին կըրճատվեց, իսկ 1917 թվից ձեռնարկութիւնները գտնվում էին կոնսերվացված վիճակում: Միմիայն 1925 թվից Սովետական Կառավարութեան շնորհիվ սկսվեց նրանց շահագործումը:

Ք Ո Բ Ե Ր

Հնագիտական արժեքավոր հուշարձաններ կան նաև Քորեբում (12-րդ դար), դեպի հարավ, Սանահին կայարանից 7 կիլոմետր, գեղեցիկ կիրճում: Սանահին կայարանից գնացքը գնում է

անվերջ օրորվելով այս ու այն կողմ, Դեբեդ գետի հոսանքին հակառակ, վայրենի ժայռերի և լեռնային զառիվայրերի մոտով և կամուրջների վրայով, մի շարք մանր թունելների միջով:

Ս Ա Ն Ա Հ Ի Ն

Դեպի Սանահին ճանապարհը տանում է Դեբեդ գետի վրա կառուցված հնագույն կամրջի վրայով, կառուցված տեղական գրանիտից՝ 12-րդ դարում:

Նրա հյուսիսային ծայրում եզրապատանգի վրա կան առյուծների քանդակադորձական աբձաններ և արձանադրութիւն գրաբար լեզվով նրա կառուցման տարեթիվ մասին: Ճանապարհը տանում է դեպի Սանահինի վանքը, որը գտնվում է Դեբեդ գետի աջ ափին, Ալավերդու գործարանից մոտ 3 կիլոմետր դեպի հարավ: Հին Սանահինը բաղկացած է մի շարք հուշարձաններից որոնք վերաբերում են 10—12-րդ դարերին: Բոլորի վրա կան արձանադրութիւններ: Վանքում կան մի քանի քաղաքացիական շենքեր: Սաջքարիբը վերաբերում են Փետդալական դարաշրջանի հնագույն հուշարձանների թվին:

Հ Ա Խ Պ Ա Տ

Երկաթուղաբաժնից քիչ հեռու, Որնակ (այժմ Ակներ) գյուղի մոտ, որտեղ պեղումների ժամանակ հայտնաբերված են բազմաթիվ բրոնզե դարի իրեր, գտնվում է մյուս վանքը՝ Հախպատը, որը հիմք է դրված համարյա Սանահինի վանքի հետ միաժամանակ 367 թվին: Այստեղ կառուցված է եղել նաև հեթանոսական տաճարը:

Կ Ա Յ Ա Ն Բ Ե Ր Դ

Հախպատի և Դեբեդ գետի միջև, սարի կատարին, պահպանվել է Կայան հին բերդը, որը տեղացիների կողմից կոչվում է Դրսևանք. կառուցված է 1233 թվին:

Ք Ա Ր Ա Յ Ր Ն Ե Ր Ը

Շատ հետաքրքիր են այստեղ Սանահինի և Հախպատի քարայրները: Նրանք հնագիտական տեսակետից դեռևս ուսումնասիրված չեն: Նրանցից մի քանիսը հայտնի են պատմութեան մեջ (Լասաուների, Զոռնիների, Պարնիների, Մակքարի քարայրները և այլն): Այդ քարայրներում, մոնղոլների հարձակումների ժամանակ, Սանահինի և Հախպատի վանքերը թաքցնում էին իրենց գանձերը: 19-րդ դարում այդ քարայրներում գտնվել են հին ձեռագրեր: 1873 թվին հնագետ Երիցյանը Մակքար կոչված քարայրից հանել է մի քանի ձեռագիր քարացած վիճակում: Այդ ձեռագրերը հիմա պահվում են ՀՍՍՌ Պետական ձեռագրատանը:

ներ և ուսումնասիրութեանն են կատարել հնագետ Երիցյանը, ահադեմիկ Ն. Մառը, Դե-Մորգանը և ուրիշները: Այդ պեղումներէց երկուսն է, որ Լոռին անցյալում հարուստ կուլտուրա է ունեցել: Ամբողջ Լոռում տարածված դամբարանները և այդ դամբարանների բրոնզէ իրերը վկայում են այդ կուլտուրայի մասին, և այն մասին, որ Լոռվա նախնադարյան բնակիչները մշակելիս են եղել պղնձով հարուստ Լարվարի հանքերը:

Մեր թվագրութեան առաջին դարում խիստ նկատելի էր Հայաստանում ասորական և սասանյան կուլտուրաների ազդեցութունը: Այդ դարաշրջանի լավագույն ճարտարապետական հուշարձաններից է Օձունի հուշարձանը:

Ո Ւ Ձ Ո Ւ Ն Լ Ա Ր

Պատմական հուշարձանների մեջ հետաքրքրականն է Խաչ-Փունդ կոչված վանքը, որը կառուցված է 735 թվին: Նրա կամարների տակ կան օրնամենատներ, որոնք սասանյան (հին պարսկական) ոճ ունեն:

Ա Լ Ա Վ Ե Ր Դ Ի

Այստեղ են գտնվում Անգրկովկասում պղնձի հանույթի և ձուլման ամենամեծ գործարանները, հիդրոէլեկտրո, գլխավոր էլեկտրոմեխանիկական արհեստանոցները և մի քանի այլ ձեռնարկութուններ: Պղնձի հանքերը գտնվում են Լարվար գետակի 2 միջին հոսանքի կիրճում, Ալավերդու երկաթուղու կայարանից մի քանի կիլոմետր հեռու: Այդ հանքավայրերի շահագործումն սկսվել է սրանից մոտ 150 տարի առաջ, բայց կանոնավոր շահագործվել են միայն 1874 թվից, երբ հունական ընկերութունից անցնում է Ֆրանսիական կոնցեսիոներների ձեռքը—կովկասյան արդյունաբերական մետաղագործական ընկերութեանը: 1914 թվի իմպերիալիստական պատերազմի ժամանակ աշխատանքը հանքերում զգալիորեն կըրճատվեց, իսկ 1917 թվից ձեռնարկութունները դադարում էին կոնսերվացված վիճակում: Միմիայն 1925 թվից Սովետական կառավարութեան շնորհիվ սկսվեց նրանց շահագործումը:

Ք Ո Ւ Ե Ր

Հնագիտական արժեքավոր հուշարձաններ կան նաև Քոբե-րում (12-րդ դար), դեպի հարավ, Սանահին կայարանից 7 կիլոմետր, գեղեցիկ կիրճում: Սանահին կայարանից գնացքը գնում է

անվերջ օրորվելով այս ու այն կողմ, Դերեդ գետի հոսանքին հակառակ, վայրենի ժայռերի և լեռնային զառիվայրերի մոտով և կամուրջների վրայով, մի շարք մանր թունելների միջով:

Ս Ա Ն Ա Հ Ի Ն

Դեպի Սանահին ճանապարհը տանում է Դերեդ գետի վրա կառուցված հնագույն կամրջի վրայով, կառուցված տեղական գրանիտից՝ 12-րդ դարում:

Նրա հյուսիսային ծայրում եղբայրամենի վրա կան առյուծների քանդակագործական արձաններ և արձանագրութուն գրաբար լեզվով նրա կառուցման տարեթվի մասին: Ճանապարհը տանում է դեպի Սանահինի վանքը, որը գտնվում է Դերեդ գետի աջ ափին, Ալավերդու գործարանից մոտ 3 կիլոմետր դեպի հարավ: Հին Սանահինը բաղկացած է մի շարք հուշարձաններից որոնք վերաբերում են 10—12-րդ դարերին: Բոլորի վրա կան արձանագրութուններ: Վանքում կան մի քանի քաղաքացիական շենքեր: Մաչքարիը վերաբերում են ֆեոդալական դարաշրջանի հնագույն հուշարձանների թվին:

Հ Ա Խ Պ Ա Տ

Երկաթուղուց քիչ հեռու, Որնակ (այժմ Ակներ) գյուղի մոտ, որտեղ պեղումների ժամանակ հայտնաբերված են բազմաթիվ բրոնզե դարի իրեր, գտնվում է մյուս վանքը՝ Հախպատը, որը հիմք է դրված համարյա Սանահինի վանքի հետ միաժամանակ 367 թվին: Այստեղ կառուցված է եղել նաև հեթանոսական տաճարը:

Կ Ա Յ Ա Ն Բ Ե Ր Դ

Հախպատի և Դերեդ գետի միջև, սարի կատարին, պահպանվել է Կայան հին բերդը, որը տեղացիների կողմից կոչվում է Դրսեանք. կառուցված է 1233 թվին:

Ք Ա Ր Ա Յ Ր Ն Ե Ր Ը

Շատ հետաքրքիր են այստեղ Սանահինի և Հախպատի քարայրները: Նրանք հնագիտական տեսակետից գեղեկ ուսումնասիրված չեն: Նրանցից մի քանիսը հայտնի են պատմութեան մեջ (Լաստուերի, Զառնիերի, Պարնիերի, Ծաղքարի քարայրները և այլն): Այդ քարայրներում, մոնղոլների հարձակումների ժամանակ, Սանահին և Հախպատի վանքերը թաքցնում էին իրենց գանձերը: 19-րդ դարում այդ քարայրներում գտնվել են հին ձեռագրեր: 1873 թվին հնագիտ երիցյանը Ծաղքար կոչված քարայրից հանել է մի քանի ձեռագիր քարացած վիճակում: Այդ ձեռագրերը հիմա պահվում են ՀՍՍՌ Պետական ձեռագրատանը:

Ծ Ա Ղ Կ Ո Ւ Ն Ի Ք

Ծ Ա Ղ Կ Ա Ձ Ո Ր

Մ Ա Ր Շ Ր Ո Ւ Տ Ը

Գաղափարապետական արշավի համար անհրաժեշտ է առաջին հերթին մշակել ճիշտ մարշրուտ, գծել այդ մարշրուտի սխեման, ունենալ վայրի տպագրված քարտեզը, կողմնացույց հեռադիտակ և այլ անհրաժեշտ իրեր: Մարշրուտի սխեմայի վրա պետք է սլաքնե-
րով ցույց տալ ուղղութիւնը և հանգստանալու, ճաշելու, գիշերե-
լու բոլոր վայրերը: Ծաղկաձորի գաղափարապետական արշավի համար մենք ընտրել ենք մեկ մարշրուտ, սակայն այդ պարտադիր չէ բոլորի համար: Յուրաքանչյուր ջոկատ կամ գաղափարապետական խմբակ կարող է իր համար մշակել և ուսումնասիրութիւնների համար ընտրել ցանկացած մարշրուտը: Մենք մարշրուտն ընտրե-
լիս նկատի ենք ունեցել ընտրել այն վայրերը, որոնք հարուստ են գաղափարապետական նշանակութիւն ունեցող օբեկտներով, այս սինքն՝ որտեղ հնարավոր է տեսնել տվյալ շրջանի պատմական նշանավոր հուշարձանները, որտեղ տեղի լանդշափտը հարուստ է աշխարհագրական և գեոլոգիական բազմատեսակ տվյալներով, անցնելու վայրերը հարուստ են առատ բուսականութեամբ, կա անտառ և մեծ հաճույքով կարելի է քայլել սաղարթախիտ ծառերի զովաշունչ ստվերներով, գետի ափով:

Մարշրուտն սկսվում է Ծաղկաձորով, Ծաղկաձորի ուսումնասիրութեամբ: Տեղութիւնն է՝ 2 օր:

Ծ ա ղ կ ա ձ ո Ր — ա ն տ ա ո լ զ ե ե պ ի Ա լ ի բ ե կ ի կ ա տ ա ր ը — կ ե ս օ Ր ի ն վ ա յ ր է ջ ը Բ ժ ն ի գ յ ու ղ՝ որ տ ե ղ գ ի շ ե ր ու մ ե ն: Առաժողոտան՝ Բ ժ ն ի ի ց ու ղ ղ և ո Ր ղ ու մ ե ն հ ե տ և յ ա լ մ ա ր շ Ր ու տ ղ:

Բ ժ ն ի — Ս ո լ ա կ — Ա ղ ղ փ ա ր ա — Մ ա ք ր ա վ ա ն ք — Ա թ ա ր ք ե կ յ ա ն — Ծ ա ղ կ ա ձ ո Ր: Ի՞նչ տեսնել և ուսումնասիրել այս մարշրուտի վրա:

Ծ Ա Ղ Կ Ա Ձ Ո Ր

Շրջանի պատմական անցյալը: Ծաղկաձորի պատմութիւնը հին է, սկսվում է 1—2 դ. դ. մեր թվականութիւնից առաջ: Այս շրջանն առաջ կոչվել է Վարաժնունիք, Վարաժ հայ դորավարի անունով, որի տոհմը իշխել է այստեղ երկար ժամանակ: Ապա այս շրջանը կոչվել է Ծաղկունիք, ծաղկունյաց ձոր: Շրջանի կենտրոնը եղել է Կեչառիս գյուղը, որի տեղը հետագայում, երբ 1827 թվին Ռուսաստանը նվաճում է այս շրջանը, ուսև մալախաններ է գաղթեցնում երկրի խորքերից և հիմնվում է այստեղ Կոնստանդինովկա գյուղը: Ծաղկաձորի վերին մասումն է գտնվում Կեչառիսի նշանավոր վանքը, որը բաղկացած է չորս եկեղեցիներից: Եկեղեցիներից ամենամեծը կոչվել է «սուրբ Գրիգոր», կառուցել է Գրիգոր Մագիստրոսը՝ Պահլավունին 1033 թվին: Հարավային կողմի փոքրիկ եկեղեցին կոչվել է «սուրբ Նշան», բայց հայտնի չէ հիմնադրի անունը և հիմնադրութեան տարին, միայն դուրս վրա գրված է որ 1223 թվին պարոն Վաչեն դարձյալ նորոգեց այս եկեղեցին: Հայավային կողմի մյուս փոքրիկ եկեղեցին կոչվել է «սուրբ Կաթողիկէ», որ կառուցել է Պոռ Իշխանի հայր Խաղբակի որդի Վասակը: Չորրորդ փոքրիկ եկեղեցին կառուցված է 1220 թվին մի անձնավորութեան կողմից (անունը հայտնի չէ), որի ծնողները եղել են Հաասը և Ռուզուքանը: Այս մենաստանը եղել է հայտնի Պահլավունյաց տոհմի դամբարանը:

Բ Ձ Ն Ի

Սա Պահլավունիների ոստանն է եղել: Այստեղ հայտնի է հին ամրոցը, որն անառիկ է եղել Կառուցված է 10-րդ դարում: Այժմ մնացել են քանդված պարսպի հետքերը: Հայտնի է նաև «սուրբ աստվածածին» վանքը, որը կառուցել է Գրիգոր Մագիստրոսը՝ 1031 թվին:

Ս Ո Լ Ա Կ

Անմիջապես գետի ափին նկատելի են հին տների ավերակներ, խիլ դիմացի լեռան զուգավորութեան մեջ բարձրանում է Մայրավանքը, որն ամենահինն է այս շրջանում և կառուցել է Յոհան փիլիսոփան 636 թվին, որը կոչվել է նաև Մայրազոմ:

Մ Ա Ք Ր Ա Վ Ա Ն Ք

Մաղկաձորից 4 կիլոմետր հեռու, հայտնի է Մաքրավանք հուշարձանը, որի կառուցումը վերագրվում է 13-րդ դարին:

Ա Թ Ա Ր Բ Ե Կ Յ Ա Ն

Մաղկունիքի ամենահին գյուղն է: Ունի հին պատմական կարավանսարաներ:

ՊՍԱՆԻ ԳԵՈՒՆԳՆԵՐԸ

Կատարում են գեոլոգիական դիտողութուններ. Մաղարթախիտ անտառի միջով ճանապարհը գնում է դեպի Ալիբեկ սարի դաղաթը: Այստեղ կարելի է դիտել անգեղիդները և մինչև Սևան ձգվող երկրի մորֆոլոգիան, շրջակա լեռնաշարը, վեհանիստ Արագածը, Արայի սարը և մյուս լեռները:

Իջնի իջնելիս այստեղ կարելի է հանդիպել կվարցի հսկայական շերտերի (շուշաքարեր): Գեղեցիկ է այստեղ Չանգու գետի կանյոնը: Քարքարոտ ձորի միջով բազալտները քերելով ուսնում է Չանգուն՝ պատմական Հրազդանը կամ Հուրաստանը: Ինչքան ցայտուն է այստեղ երևում գետի քայքայիչ աշխատանքը: Սուրկ գյուղի վերին մասում հետաքրքիր է ամբարտակը: «Սպիտակ ածուխի» օգտագործման նշանակութունը մեր երկրի տնտեսական վերելքի համար: Սևան-Չանգվի կասկաղը: Գետի աջ կողմում դիտել մերգելները—կրակավային քարեր: Ադիարա չհասած բոլոր մերգելները սրաքարեր են դառնում: Մերգելները օգտագործման նշանակութունը շինարարության մեջ: Գյուղի մոտ կարելի է նկատել կրաքարային տեսակների հետախուզումների հետքեր:

Դեպի Մաքրավանք գնալիս չորս կողմը կարելի է դիտել պեմզայի հանքավայրերը, իսկ Աթարբեկյանից—Մաղկաձոր ճանապարհի վրա անուշահամ աղբյուրները, որոնք հայտնի են իրենց առատությամբ և մաքրությամբ:

ՊՍԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԳԵՏՆԵՐԸ

Կատարում են աշխարհագրական դիտողութուններ: Դեպի Ալիբեկի լեռնագագաթը (2831 ծ. մ. բ.) ճանապարհն անցնում է անտառով: Այս ուղու վրա հետաքրքիր է դիտել անտառը, ծառերի բնիքի վրա որոշել կողմերը, որոշել ծառերի տեսակները,

բուսական գոտիների ուղղահայաց փոփոխութունները, աղբյուրներն ու ջրբաժան դաղաթը: Իջնից ճանապարհը շարունակվում է դեպի հարավ, մինչև Գյումուշ՝ Չանգվի ժայռոտ ափերով: Այս կիրճերում անհրաժեշտ է ուսումնասիրել երկրի շերտերի դասավորութունն ու ջրի քայքայիչ աշխատանքը: Գյումուշ գնալիս կարելի է այստեղ ուսումնասիրել Գյումուշ գետի դիրքը, ամբարտակը: Այնուհետև ամբողջ մարշրուտի երկարությամբ դիտել Չանգու գետի հունը:

Ամբողջ մարշրուտի ընթացքում դավառադիտական խմբի՝ արշավի մասնակիցները հավաքում են կոլեկցիաներ, կազմում են հերբարիումներ, նկարում են հուշարձանները և արշավի արդյունքներն ամփոփելուց հետո տեղում կազմակերպում են դավառադիտական ցուցահանդես: Լավ կլինի այդ ցուցահանդեսը կազմակերպել Մաղկաձորի հնագիտական-պատմական թանգարանում և առհասարակ ուսումնասիրութունների բոլոր նյութերը հավաքել թանգարանում:

Չպետք է մոռանալ, որ արշավի մասնակիցները ոչ միայն պետք է ուսումնասիրեն, այլև հայտարերեն նոր օբեկտներ, պատմական նոր հուշարձաններ, նոր հանքավայրեր, բույսեր և այլն: Այսպես պետք է կառուցված լինի պատանի դավառագետի աշխատանքի պլանը՝ սերտ կերպով կապված վայրի բազմակողմանի ուսումնասիրության հետ:

ԵՔՍԿՈՒՐՄԻՈՆ ՄԱՐՇՐՈՒՏՆԵՐ

Ո Ի Զ Ո Ի Ն Լ Ա Ր

1-ԻՆ Մ Ա Ր Շ Ր Ո Ւ Տ

Ուղունլար—Մանահին կայարան—կապի ճանապարհով դեպի Ալավերդի—Մանահին գյուղ (գիշերել): Վերադարձ՝ Հախպատ—Կայան բերդ—Իջնել արահետով դեպի Ալավերդի—Ուղունլար:

2-ՐԴ Մ Ա Ր Շ Ր Ո Ւ Տ

Ուղունլար—Մանահին կայարան—երկաթուղով Քոլագերան—Չորագեղ—Թումանյան գյուղ (գիշերել). վերադարձը՝ Թումանյան գյուղ—Քոլագերան—Մանահին—Ուղունլար:

Այս երկու մարշրուտներն էլ նախատեսված են 2 օրվա համար, բայց կարելի է այն անցկացնել նաև 3 օրում կամ դասավորել այնպես, որ հնարավոր լինի անցնել 1 օրում, այս դեպ-

քում անհրաժեշտ կլինի կրճատել մարչքուսի որոշ օրեկաներ և սահմանափակվել ուսումնասիրությունների ավելի նեղ շրջանակներով:

Ք Ո Լ Ա Գ Ե Ր Ա Ն

1-ին Մ Ա Ր Շ Ր Ո Ւ Տ

Տևողությունը 1 օր.

Քոլագերան—Ալալերդի—Մանահին գյուղ (գիշերել), վերագարած՝ Մանահին գյուղ—Հախարատ—Կայան Բերդ—Խջնիկ արահետով դեպի Ալալերդի—երկաթուղով դեպի Քոլագերան:

Փ Ա Մ Բ Ա Կ

Տևողությունը 2 օր.

Փամբակ—Թաղավորանիստ բլուր—Կիրովական—կղմինդրի գործարան—դիտել Փամբակ-չայ դետը—Կիրովականի հնագիտական պատմական թանգարան—Վտնանց ձոր (գիշերել յայլաներում): Մյուս օրն առավոտյան դեպի Մայմեխի գագաթը, վերագարած՝ Համզաչիմանի վրայով Փամբակ:

Ք Ո Ի Չ Ա Կ

Տևողությունը 2 օր.

Քուչակ—դիտել շրջակա հին բերդի մնացորդները—Թաքյառու—Ղաղնաֆար—դեպի Գեղհովիտ և Լեսսինգի լիճ: Գիշերել Քուչակի յայլաներում: Մյուս օրը գնալ դեպի Քաղցր ջրերի հովիտը, Մխով աղբյուր-ջրվեժները և վերագառնալ Գեղհովիտով, կարճ պարհով՝ Քուչակ:

Ս Տ Ե Փ Ա Ն Ա Վ Ա Ն

Տևողությունը 1 օր.

Ստեփանավան—Բերդ—Չորագետ. վերագարած՝ նույն ճանապարհով:

Ի Ս Տ Ի Ս Ո Ի

Տևողությունը 1 օր.

Դիտել հանքային աղբյուրները: Ծանոթանալ սանատորիայի հետ: Գնալ դեպի Ջրվեժը և տեսնել աղբյուրների հին տեղերը և հին բուժավայրը:

Լ Ի Ճ Ք Վ Ա Չ

Տևողությունը 2 օր.

Լիճքվաղ—Վարդանաձոր—Վ. Վարդանաձոր—ճգնավոր (գիշերել որևէ յայլայում): Վերագարած՝ Կալեր—Վանք—Լիճքվաղ:

Ք Յ Ա Ն Ք Յ Ա Ն

Տևողությունը 2 օր.

Քյանքյան—Հանդիսի գագաթը—Բաղդուղ (գիշերել): Մյուս օրն առավոտյան՝ Բաղդուղից Հադիսի արևմտյան լանջով (ձորով) դեպի Քյանքյան:

Ծ Ա Ղ Կ Ա Չ Ո Ր

Տևողությունը 2 օր.

Ծաղկաձոր—անտառով բարձրանալ դեպի Ալիբեկի գագաթը կեսօրին վայրէջք դեպի Բժնի գյուղ, որտեղ գիշերում են: Առավոտյան Բժնիից ուղևորվում են հետևյալ մարշրուտով՝ Բժնի—Սուլակ—Աղիարա—Մաքրավանք—Աթարբեկյան—Ծաղկաձոր:

ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԱՐՑԱՑՈՒՑԱԿ

1.

ԼԵՌՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԳԵՈՂՈԳԻԱ

1. Բնակավայրի ընդհանուր տեսքն ու բնույթը. լեռնոտ, բլուրներով ծածկված, հարթ, շատ կամ քիչ կալըրտված հովիտներով: Տվյալ տեղում լեռնային տեսակները՝ Թույլ, փխրուն, կարծր: Քարքարոտներ ու քարակույտեր: Ավազոտ, կավային և քարքարոտ տեղեր, նրանց չափն ու ուղղությունը: Գլխավոր լեռնային տեսակների մերկացումները: Մերկացած առանձին շերտերի մեծության մանրամասն նկարագրությունը: Հավաքել շերտերի նմուշներ (տեսակներ) և նրանց մեջ եղած բուսական և կենդանական մնացորդներից զոյացած հանքեր: Շերտերի դասավորությունը՝ հորիզոնական, թիք, ուղղահայաց, ավիքավոր, թեքումներ և այլ ծալքեր:

2. Բնակավայրերի հեղեղատներն ու ձորերը. նրանց խորությունը, լայնությունը, երկարությունը, թեքու-

թյունը և ծածկող բուսականության չափը: Լեռնային տեսակները ձորերի մերկացումներում՝ ավաղ, քար, կրաքար... Ձորերի առաջանալու պատճառները և մեծանալը, այսինքն այդ պրոցեսի արագությունը տարիների և տարվա եղանակների ընթացքում: Պայքար այդ պրոցեսի դեմ՝ ամրացնելով ձորերը (ինչով): Ձորերի տեղը և նրանց անունները:

3. Այրեր. նրանց տեղը, ձևերը, մթությունը և լեռնային այն տեսակները, որոնց մեջ գոյացել են: Ինչից են առաջացել՝ ա) հոսող ջրի ազդեցությունից. բ) քամու հոսանքից. գ) մարդու ձեռքով է փորված, թե միայն ընդարձակված է: Փլվածքներ, ստորերկրյա անցքեր, դիպսի և քարաղի շերտեր... Ստալագմիտներ և ստալակտիտներ (շթաքարեր): Մարդու և կենդանիների ոսկորներ, նախապատմական մարդու օջախներ և առօրյա կյանքում գործածվող առարկաներ:

4. Փխրուեն ավազներ և նրանց տեղը (դետերի և լճերի ափերը) ու բունած տարածությունը: Ավազների շարժողությունն ու աճելիությունը, բարխաններ ու ջրերի ափերին լեզվակներ: Ինչից է առաջանում ավազը. դետի և լճի ավազ: Մարդու մղած կռիվը փխրուեն ավազների դեմ: Նախապատմական մարդու և ոչնչացած կենդանիների մնացորդները փխրուեն ավազների մեջ: Ավազով ծածկված քաղաք, գյուղ, առանձին շենք:


5. Բնակավայրի օգտակար հանքեր. երկաթ, պղինձ, ոսկի և այլն, քարածուխ, աղ, զանազան կավեր և այլն:

Լեռնային տեսակների և քարերի մշակությունը շինությունների, երկանքների և ջրաղացների համար. կրաքարի այրումը, ցեմենտ պատրաստելը և այլն: Մշակության միջոցները և արտահանելու տեղերը:

Այս բոլորից հավաքել նաև կոլեկցիաներ:

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

1. Մանրամասն տեղեկություններ տեղական բույսերի մասին: Ջրամբարները (դետեր, լճեր, ավազաններ և այլն) և նրանց բուսականությունը: Բույսերի բաշխումը Ջրամբարներում, որ կախված է ջրի հատակից, խորությունից և տիրապետող քամիներից: Ամենատարածված ջրային բույսերը: Ջրամբարի սխեմատիկ քարտեզի վրա պետք է նշանակել համակեցությունների բաշխումը նրա մեջ: Ջրային բուսականությունը արհեստական ջրամբարներում:



Լեռնային արշավի մասնակիցները Մայմեխ օտարի ստորոտին

2. Տեղական ճահիճների մեծութունը, դիրքը, անունը և բնույթը: Մամուլով, խոտով, ճլախոտով, անտառով, սեղով ծածկված ճահիճներ: Ճահճային բույսերի գլխավոր տեսակները: Տորֆ պարունակող ճահիճների դասավորությունը, նրանց խորությունը, տորֆի հատկությունը և նրա օգտագործումը: Ճահիճների ցամաքեցումը և նրանց օգտագործումը մշակութային համար: Բուսականութային փոփոխությունը ճահիճը ցամաքեցնելուց առաջ:

3. Անտառի տեղը, հասակը, հողը և ծառերի գլխավոր տեսակները, փշատերև և սաղարթավոր անտառ: Անտառային բույսերի շերտերը, խոշոր ծառեր, մատղաշ անտառ, երկար խոտ, կարճ խոտ, մամուլ: Ծառերի տեսակների փոփոխությունը բնական պայմաններում և բնական ընթացքով, կամ թե անտառը կտրելուց, մաքրելուց, հրդեհելուց հետո: Անտառային պտուղներ՝ ընկույզներ, սունկեր և դրանց նշանակությունը վայրի համար:

4. Մարգագետնի ընդհանուր բնույթը և նրա տեղը՝ բլրի վրա, սարի լանջին, հովտում: Մարգագետնի հողը՝ կավային, ավազային, տորֆ պարունակող: Մարգագետնի բուսականությունը կախումը ունի և խոնավության չափից: Ջրվող, ճահճոտ, անջրըղի անտառոտ մարգագետին: Մարգագետնի խոտերի գլխավոր տեսակները՝ երկար ու կարճ խոտ: Մարգագետնիների օգտագործումը — կենդանիների արոտատեղ, խոտհարք, չոր խոտի քանակությունն ու որակը. աշնանախոտն ու նրա օգտագործումը: Մարգագետնիների բարելավումը, մաքրումը թփուտներից ու մացառուտներից, չորացումը, պարարտացումը: Մշակված դաշտերի ու խոպան հողերի աստիճանաբար մարգագետնիների փոխվելը:

5. Հողը՝ սևահող, կավահող, կավճային և այլն: Գլխավոր բույսերի աճեցումը տարվա եղանակների համեմատ:

6. Այս կամ այն վարելահողի տեղը առաջ ինչ տիպի բուսականություն է եղել (անտառ, մարգագետին, ճահիճ և այլն): Անպետք խոտերի գլխավոր տեսակները և այն կապը, որ կա այդ բույսերի, աշնան ցանքերի, գարնան ցանքերի և բանջարեղենների միջև: Վարելահողի միջնակներում և քարակույտերի շուրջը բուսած անպետք խոտերը (մոլախոտերը):

7. Վայրենի վիճակում աճող ուտելու բույսեր, անասունների կերաբույսեր, տեխնիկական բույսեր, դաշտերի, այգիների ու բանջարանոցների մշակովի բույսեր: Բերովի բույսեր: Թեյի և դեղերի համար գործածվող բույսեր:

Բոլոր բույսերից կազմել հերբարիումներ:

1. Բնակավայրի դերը բնակչության շարժումների պատմության մեջ:

2. Բնակչությանը հիմնականում է ապահովում ծնվել, ապրել, մեծացել: Գյուղացիական ապստամբություններ: Գործադուլներ և գաղտնի բնակչության գործունեություն: Գործադուլների և գաղտնի բնակչության գործունեության զոհերը: Տեղական գործիչներից ովքեր են դատի ենթարկվել բնակչության գործունեության պատճառով. տվեք նրանց կենսագրությունը, նկարագրեցե՛ք նրանց բնութագրերը, ձևով բերե՛ք նրանց լուսանկարները:

3. Ինչպիսի՞ գաղտնի կազմակերպություններ էին գործում մինչև 1905 թիվը, մինչև 1917 թիվը և քաղաքացիական կռիվների տարիներին: Տեղի և էքսպրոպրիացիաներ: Պատժող էքսպրոպրիացիաներ և հալածանք կառավարության կողմից: Պատերազմը և նրա ազդեցությունը գործարանի, գյուղի, բանվորների և գյուղացիների տնտեսական վիճակի վրա:

1905 թվի դեպքերը: Ինչպես անցավ փետրվարյան բնակչության տեղում. հայ բուրժուազիայի, դաշնակների տիրապետությունը. մենշևիկներ, ազգամիջյան կռիվներ: Տեղի բուլշևիկների դերը այդ շրջանի բնակչության շարժումների մեջ:

Սովետական իշխանության հաղթանակի համար մղված կռիվների մասնակիցների հիշողությունները: Եղբայրական գերեզմաններ. ովքեր են այնտեղ թաղված: Կազմել նրանց կենսագրությունները և հավաքել լուսանկարները:

Կազմակերպել վայրի բնակչության անցքերի խրոնիկան:

Կազմակերպել ծերերի զբոսայգիներ վայրի անցյալ դեպքերի մասին:

ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կոլեկտիվ տնտեսությունների թիվը կազմակերպման օրից: Կոլեկտիվ տնտեսության բռնած տարածությունը: Այդ տարածության բաժանումն ըստ պիտանի հողերի: Կոլեկտիվ տնտեսությունների հողերը մինչև բնակչության հիմնական պատկանել (մասնավոր կալվածք, վանքապատկան և այլն):

Ձանազան աշխատանքների շրջանների տևողությունը. ո՞րքան է տևում արածեցնելու շրջանը և որքան ժամանակ են մնում կենդանիները գոմում: Որքանով են ապահովված ինվենտարով (շնչավոր և անշնչ):

2. Դեռ առաջադրական սիստեմը. սերմավորութունը մինչև ուսուցիչի և ներկայումս: Աշխատանքային և դարձանագրանի պատրաստութունը: Պարարտացում (տեսակները): Միջին բերքը (ըստ տարիների) մինչև ուսուցիչի և այժմ: Չանագան մեքենաների և գործիքների գործածութունը տնտեսության մեջ:

3. Խոտհարք: Խոտերի տեսակները. հրքան է մշակված. մշակովի խոտերի ցանքը: Հնձի եղանակները: Խոտի բերքը: Ամբողջ արդյունքը:

4. Իանջարբուծության տեսակները. մշակելու տեխնիկան. արդյունքը, պահելու եղանակը, վաճառքի հանելը. բանջարանոցների նշանակութունը՝ արդյունաբերության և սեփական պետքերի համար գործածելու տեսակետից:

5. Այգիներ. այգիների բուսած ընդհանուր տարածութունը, և ծառերի առանձին տեսակների բուսած մակարդակը: Պտղատու ծառերի այգեգործութունը: Պտուղների գլխավոր տեսակները: Տունկերի տեսակները հրտեղից են ստանում: Այգեգործական տեխնիկան, հողի մշակութունը, ծառերի խնամքը: Վնասատուներ: Այգեքաղ և պտուղները պահելու եղանակը: Ծառերից թափված պտուղների օգտագործումը: Տեսակների ջոկելը և վաճառքի հանելը: Ամբողջ արդյունքը: Պտղատու ծառերի տրակարանները և նրանց խնամելու տեխնիկան:

Այգու նշանակութունը արդյունաբերության և սեփական պետքերի գործածության տեսակետից:

6. Անասնաբուծության վիճակը. կենդանիների ցեղերը. կերակրելը: Կենդանիների քաշը: Կաթի քանակութունը, հատկութունը և պահպանումը: Կաթի և կաթնեղենի գործածութունը սեփական պետքերի և վաճառքի համար: Ինչպիսի պայմաններում են պահում կենդանիներին տներում և գոմերում. աղնիվ ցեղի կենդանիների բազմացումը: Կենդանիներ ընտրելու մեթոդը:

7. Արդյո՞ք կոլտնտեսութունում կան տեխնիկական ձեռնարկութուններ: Արհեստանոցներ — դարբնոց, հյուսնոց, փականագործարան, կաշեգործարան, դրանց վիճակը և աշխատանքը: Բանվորների թիվը: Տեխնիկական ձեռնարկութուններ — ջրաղաց, ձիթհանք, պանրագործարան, օղի քաշելու, պահածոների, պտուղներ ու բանջարեղեններ չորացնելու գործարաններ: Այդ ձեռնարկութունների գործունեութունը

մինչև ուսուցիչի (եթե կային) և այժմ: Արտագրության տեխնիկան և այլն:

8. Երջանիկ և ունևոր կյանքի հասնելու պայմանները: Աշխօրերի աճը: Կոլտնտեսութունների կուլտուրական վերելքը: Կուլտուրական կենցաղ՝ նոր տներ, կուլտուրական սպասարկման ձևերարկներ և այլն*):



*), Այս հարցացուցակը կազմված է ըստ գավառագետներ Չինս-Լիաով-սկու և Աբրամովի «Բնակավայրի ուսումնասիրութունը» աշխատության, մեր հավելումներով և հարմարեցված՝ մեր պայմաններին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան
2. Սովետական դավառագիտության խնդիրները
3. Ի՞նչ է դավառագիտությունը
4. Գավառագիտական արշավներ
5. Գուգարաց աշխարհ—Տաշիր
6. Ծաղկունիք—Ծաղկաձոր
7. Էքսկուրսիոն մարշրուտներ
8. Գավառագիտական ուսումնասիրությունների հարցացուցակ:



Պատ. խմբագիր՝ Ս. Դավարյան
Տեխ. խմբագիր. Հ. Կարսպետյան
Սրբագրիչ՝ Կ. Պողոսյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. Պարոնիկյան
Հանձնված է արտադրության 1940 թ. նոյեմբերի 27-ին
Ստորագրված է տպագրության 1940 թ. դեկտեմբերի 16-ին
ՎՃ 3681, պատ. № 296, հրատ. № 93, տիրած 1000

Հումհրատի տպարան, Երևան, Տեղյան № 127

Հայաստանի Ազգային գրադարան



NL0420119

4670 Т. П. 50 4.

В. ДАРЬЯН

СПУТНИК

Краеведческих походов

для школьников и пионеротрядов

ПРОСВЕДАТ

Ереван, типография Просвещения, Терян 127